ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

«ՎԱՆԱՁՈՐԻ ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՎ 16 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

**2024-2029 թթ**

# ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

*Առաքյալի սիրտ,*
*իմաստասերի գլուխ,*
*ադամանդե ճակատ՝*
*ահա կատարյալ առաջնորդը:*

*Գարեգին Նժդեհ*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 4

1. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ........ 5

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ ........ 15

2.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ........ 15

2.1.1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԶՊ ԱՌԱՐԿԱՅԻ ԿԱԲԻՆԵՏԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ........ 18

2.1.2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՈՒԺԿԵՏԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ........ 19

2.1.3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՃԱՇԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ........ 20

2.1.4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԻՄԻԱ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ........ 21

2.1.5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ........ 22

2.1.6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ ........ 23

2.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ........ 24

2.3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՐՄԻՆՆԵՐԻ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ........ 28

2.4. ԴՊՐՈՑ-ՀԱՄԱՅՆՔ ԿԱՊԸ ........ 31

2.5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ........ 33

2.6. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ........ 37

2.7. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ........ 42

2.8. ՀԱՍՏԱՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ՈՒ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ........ 50

2.9. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ........ 55

2.10. ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ........ 64

2.11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ........ 71

2.12. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ... 73

2.13. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ........ 82

2.13.1 ՄԱՐԴԿԱՅՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 85

12.14. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ........ 87

4. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ........ 89

5. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ........ 96

6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ........ 101

7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ........ 104

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ........ 122

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Առաքյալի սիրտ, իմաստասերի գլուխ,*
*աղամանդե ճակատ՝ ահա կատարյալ առաջնորդը:*

*Գարեգին Նժդեհ*

Առաջնորդության «սիրտը» գործ ունի մարդկային հավատի, արժեքների, երազանքների, այլ կերպ ասած' մարդու անձնական պատկերացումների հետ: Կարող եք վստահ լինել, որ եթե ցանկացած մարդու հարց տրվի, թե ո՞րն է իր պատկերացմամբ լավ դպրոցը, ապա պատասխաններում շատ ընդհանրություններ կգտնվեն, բայց և միաժամանակ, անհատական մոտեցումներով պայմանավորված կլինեն նաև տարբերություններ: Առաջնորդության «գլուխը» գործ ունի գործնական աշխատանքում ձեռք բերված փորձի և կոնկրետ խնդիրների լուծման ժամանակ տեսության հետ մեկտեղ այդ փորձի կիրառման հետ: Պատահական չէ, որ ապագայում մեր կողմից կիրառվելիք գործողություններն ու դրանց ռազմավարությունը սովորաբար հիմնված են լինում որևէ տեսության, ձեռք բերված փորձի և խնդրի վերաբերյալ ձևավորված պատկերացումների և մոտեցումների վրա:

Եվ, ի վերջո, «ձեռքը»՝ մեր կողմից ձեռնարկվող կոնկրետ գործողություններն են' կայացված այն որոշումներն ու քայլերը, որոնք ձեռնարկում ենք մեր մշակած ռազմավարությունը, գործընթացները իրականացնելու համար: Ինչպես «սրտի» և «գլխի» պարագայում' այս դեպքում ևս կարևոր են ոչ միայն պատկերացումները, այլև տվյալ անհատի անձնական հատկանիշները և վերջինիս կողմից ձեռնարկվող միջոցառումները: Այսօրվա բարդ իրականության մեջ «միակ լավագույն մոտեցումը» և համանման այլ տարբերակները չեն կարող լիովին արդյունավետ լիներ Ընդհակառակը, սեփական փորձի վրա հիմնված մոտեցումների բազմազանությունը ավելի ողջունելի են հատկապես հանրակրթության կառավարման նոր համակարգերի մշակման գործընթացում: Ցանկացած տնօրեն պետք է մշակի «սրտի», «գլխի» և «ձեռքի» հետ կապված իր սեփական մոտեցումները, քանի որ վերջիններով պայմանավորված է նրա աշխատանքի հաջողությունը:

# 1. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

***«Ի՞նչ ենք մենք մտածում, ի՞նչ գիտենք կամ էլ ինչի՞ն ենք հավատում՝ վերջիվերջո այնքան էլ մեծ նշանակություն չունի: Էականն այն է, թե ինչ ենք մենք անում»:***

***Ջոն Ռաշին***

Ժամանակի ընթացքում զգալիորեն փոխվել են տնօրենի դերը և պարտականությունները: Ավանդական դպրոցում տնօրենը վարչական գործառույթ է իրականացնում: Արդյունավետ աշխատող տնօրենները, օրինակ, պատասխանատու են պլանավորման, կազմակերպական աշխատանքների իրականացման համար: Նրանք պետք է առաջնորդեն և վերահսկեն դպրոցում իրականացվող աշխատանքները:

- Պլանավորումը դպրոցի առջև դրվող հպատակների և խնդիրների սահմանումն է և դրանց իրականացմանն ուղղված համապատասխան ծրագրերի և ռազմավարության մշակումը:
- Կազմակերպումը անհրաժեշտ մարդկային, ֆինանսական և ֆիզիկական ռեսուրսների համատեղումն է, որոնք պետք է ուղղված լինեն նպատակի արդյունավետ իրականացմանը:
- Առաջնորդելը ըստ էության ենթականերին ուղղորդելն է:
- Վերահսկումը տնօրենի կողմից ենթակաների աշխատանքը գնահատելու կարողությունն է, ծրագրերը և աշխատանքը վերանայելու ունակությունը և դրա հետ կապված հետադարձ կապի ապահովումը:

Տնօրենը պարտադիր կերպով պատասխանատվություն է կրում այն ամենի համար, ինչ տեղի է ունենում դպրոցում և դրանից դուրս: Տնօրենը պատասխանատու է աշխատակազմի համար ապահովելով բոլորի ներկայությունը և աշխատանքի հնարավոր բարձր որակը: Տնօրենը պատասխանատու է դպրոցի կրթակարգի կատարման համար այսինքն, որ ուսուցիչները սովորեցնեն այն, ինչը պետք է, սովորողն էլ, համապատասխանաբար, սովորեն մատուցված նյութը:

Տնօրենը միաժամանակ պատասխանատու է ծնողների առջև, պետք է ծանոթանա ծնողներից յուրաքանչյուրի խնդիրն և փորձի դրանց լուծումներ տալ: Տնօրենը պատասխանատու է աշակերտների ֆիզիկական անվտանգությունն ապահովելու համար: Տնօրենը պատասխանատու է յուրաքանչյուր դասարանի համար՝ սահմանված նվազագույն գիտելիքները ապահովելու, հատուկ կարիքներ ունեցող երեխաների, օժտված երեխաների և սահմանափակ ընդունակություններ ունեցող երեխաների կրթության և դաստիարակության համար: Միաժամանակ տնօրենը պատասխանատու է նաև սոցիալական ծառայությունների, սննդի, առողջապահության, տրանսպորտի ապահովման համար:

Ղեկավարումը կարելի է սահմանել որպես փիլիսոփայություն, որը «գործողության» մեջ է: Այն դինամիկ և անվերջանալի գործընթաց է: Այստեղ «փիլիսոփայությունը» նշանակում է, որ կազմակերպական արժեքները և (դրանց գոյության տրամաբանությունը) ձևավորվում են բարձրաստիճան ղեկավարության կողմից: Այս մակարդակում են ձևակերպվում կազմակերպության հետագա զարգացմանն առնչվող խնդիրները: Դա իրականացվում է փիլիսոփայական մոտեցումներով (միջոցներով)՝ պատկերացում, ինտուիցիա, հիպոթեզ, փաստարկ (ապացույց), զարգացում, տրամաբանություն, հռետորական հարցադրում, արժեքների վերլուծություն և հստակեցում: Այնուհետև այս ամենը վերածվում է աշխատանքային պլանի: Վերջինիս հաջորդում է պլանի քննարկման «քաղաքական» փուլը, և այն պետք է ընդունվի այն մարդկանց կողմից, ովքեր անմիջականորեն տնօրինում են ռեսուրսները: Սրանից հետո աշխատանքային գործընթացում ներգրավվում են մարդիկ, ովքեր մոբիլիզացնում են այդ ռեսուրսները: Այս փուլում գործ ունենք ավելի շատ կառավարման՝ քան ղեկավարման հետ: Մշակվում է աշխատակարգ: Մշակվում է տեխնիկական աշխատակազմի աշխատանքային պլանը: Ի վերջո, կարևոր է նաև աշխատանքների վերահսկումը: Սա մի փուլ է, որը բաղկացած է ֆորմալ վերահսկումից, աուդիտից, հաշվապահական մատյանների ստուգումից, հաշվետվությունների կազմումից և գնահատումից:




Որպես ղեկավարներ վերահսկողները խթանում են մյուսներին հետևել իրենց, քանի որ գիտակցում են կազմակերպության առաքելությունը՝ որտեղ է այն և դեպի ուր պետք է շարժվի:

Առաքելություն, որին կհետևի կազմակերպությունը: Ղեկավարման գլխավոր որակներից մեկը առաքելության սահմանումն է: Առաքելությունը կազմակերպության համար ցանկալի ապագայի մտապատկերն է: Իրականում առաքելությունը տնօրենի ամենակարևոր անելիքն է դիտվում:

Տնօրենը ոչ միայն պետք է հստակորեն հասկանա կազմակերպությանը առաքելությունը, այլև կարողանա այն հաղորդել կազմակերպության մյուս անդամներին:

Առաքելությունը սահմանելուց հետո տնօրենը պետք է համաձայնության գա այն արժեքների և նպատակների շուրջ, որոնք գործունեության հիմք են հանդիսանալու և պայմանավորվելու են ուսուցիչների և դպրոցի մյուս աշխատողների վարքագծերը:

1. Առաքելությունը ստեղծում է նպատակների և մտահղացումների ընդհանրություն և սահմանում գործողությունների կարգը:
2. Առաքելությունը էվոլյուցիոն գործընթաց է, որը հիմնված է տնօրենի շարունակական կշռադատման, գործողության և վերագնահատման վրա:

Կրթական ոլորտի ղեկավարումը էականորեն տարբերվում է: Բարոյական կողմը այստեղ չափազանց կարևորվում է: Բացի այդ՝ չափազանց կարևոր է նաև սպասվելիք արդյունքների կանխատեսումը, դրանց հասնելու միջոցների ճիշտ ընտրությունը և գնահատումը:

- Իրատեսական նպատակներով որոշակի բարձր ակնկալիքներ, որոնք կստեղծեն այն միջավայրն ու մշակույթը, որով պետք է առաջնորդվեն կազմակերպությունն ու նրա անդամները:
- Վստահություն մարդկանց նկատմամբ:
- Ուսուցիչների և մյուս աշխատակիցների հետ հաղորդակցվելու ունակության:
- Անկեղծություն, որը կարելի է ներկայացնել որպես ազնվություն և սեփական վարքի և գործողությունների պատասխանատվությունն իր վրա վերցնելու պատրաստականության՝ ծառայելու պատրաստականության:
- Ախտորոշելու և համապատասխան գործունեությունն ու ընթացակարգերը ընտրելու, և համարձակ քայլերի դիմելու ունակություն:
- Ջանքերը և նպատակները զուգակցելու ունակություն:

***Անհատ, դպրոց, աշխատանքային պրոցես և դպրոցների կառավարման համակարգ՝ փոխկապակցված են և ամբողջության մեջ նպաստում են դպրոցի զարգացմանը:***

*Ծնողներին, սովորողներին և համայնքին հաշվետու լինելը դպրոցի մենաշնորհն է:*




- **Անհատ**
- **Դպրոց**
- **Աշխատանքային պրոցես**
- **Դպրոցների կառավարման համակարգ (ԴԿՀ)**

Փոփոխությունները կարելի է համարել իրականացված, երբ դրանք դառնում են առօրյայի մի մասը: Անհրաժեշտ է աշխատել, որ նոր մոտեցումները բխեն մեր ազգային առանձնահատկություններից, ընդունվեն, արմատավորվեն ու տեղայնացվեն մեր սոցիալական նորմերում և արժեքների համակարգում: Փոփոխությունների իրականացնելու համար ժամանակ է պահանջվում: Շատ կարևոր է նաև մարդկանց խթանման կամ պարգևատրման համակարգի ներդնումը:



Դպրոցը դինամիկ սոցիալական համակարգ է, որը փոփոխվում է ժամանակի ընթացքում: Ինչպես մարդիկ են ժամանակի ոգուն համապատասխան փոխում իրենց հագուստը, այնպես էլ այսօր արդյունավետ դպրոց ունենալու համար հարկ է «պահարանը դնել» հին դպրոցի որոշ սկզբունքներ և նորերը «հագնել»:

Դպրոցը մի արդյունավետ համակարգ է, որն իր մեջ ներառում է մարդկանց, կառույցներ, փոխհարաբերություններ, գաղափարական նպատակներն, իմացական նյութ, սովորելու շարժառիթներ և ցանկություն:

Ընդհանուր առմամբ՝ կրթության որակի բարձրացման նպատակները նույն են գրեթէ բոլոր՝ թե՛ մեծ, թե՛ փոքր  երկրներում:

Քաղաքականության մշակողները, մանկավարժները և ծնողները նույն բանն են ցանկանում տեսնել՝ դպրոցի պայմանների այնպիսի փոփոխություն, որն ակնառու կդարձնի սովորողների ստացած գիտելիքները, հմտություններ ու արժեքային համակարգը:

Դպրոցի արդյունավետությանը նպաստող գործոններից է.

- դպրոցի միասնական հայեցակարգը
- մասնակցություն դպրոցում որոշումների կայացմանը
- դպրոցում ստեղծված դրական միջավայրը
- դպրոցի տնօրենի՝ որպես աջակցի դերը
- սովորողի՝ որպես մասնակցի դերը
- համայնքում՝ որպես ինտերակտիվ փոխհարաբերությունները:

Կրթությունը պետք է սահմանվի ոչ թե որպես մարսվելու ենթակա գիտելիքների մի հանրագումար, այլ որպես գործընթաց, որի արդյունքում մարդիկ, հիմնվելով բազմաբնույթ փորձի վրա, սովորում են ինքնարտահայտվել, հաղորդակցվել, հարցեր տալ աշխարհին և ձևավորվում են որպես մարդ:

Կրթությունը իրապես ժողովրդական խնդիր է: Այն միայն սովորել-գիտենալ, սովորել-գործել կամ սովորել-լինել չի նշանակում, այլ նաև՝ սովորել-միասին ապրել և, հետևապես, կառուցել վաղվա հասարակությունը:

Դպրոցի առաքելությունն այն հիմնական, անխախտ սկզբունքն է, որով ղեկավարվում է նրա գործունեությունը, որոշումներ են ընդունվում և պատասխաններ տրվում և ամբողջացվում հետևյալ արդյունքները.

1. Համադպրոցական ակադեմիական և սոցիալական վարքագծային նպատակների շարունակ վերահսկող համալիրի առկայություն
2. Մեծ ակնկալիքների առկայություն
   ա) Դպրոցի ղեկավարությունն ու ուսուցիչները համագործակցում են սովորողների և նրանց ծնողների հետ՝ ակնկալելով սովորողների ջանադիր աշխատանքն ու բարձր առաջադիմությունը:
   բ) Սովորողները ունեն պատասխանատվություն ստանձնելու բազմաթիվ հնարավորություններ:
   գ) Սովորողների անցյալ ձեռքբերումների մակարդակն ապացուցում է, որ նրանք հասել են դրսևորման բարձր չափանիշների
3. Դպրոցի աշխատակազմը և ծնողները ակտիվորեն սատարում են դպրոցի հրապարակած առաքելությունը:
4. Նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կառավարումն ու ռեսուրսների օգտագործումն անհարգի չեն ճնշում դպրոցի աշխատակազմին:

Դպրոցի խնդիրները.

- Կրթության գործընթացն ընդունել՝ որպես հաճույքի և հայտնագործությունների ժամ բոլորի համար:
- Նպաստել սիրո և գնահատանքի դրսևորմանը կրթության հանդեպ՝ այն ընկալելով որպես տևական աշխատանք ողջ կյանքի ընթացքում:
- Օգնել սովորողներին՝ ակադեմիական և անհատական բարձր չափանիշներ ձեռք բերելու, նպաստել յուրաքանչյուրի՝ լավագույնս ինքնադրսևորմանը:
- Դասարանում ստեղծել բարենպաստ պայմաններ վստահության, խրախուսման և հոգատարության մթնոլորտում ակտիվ սովորելու համար:
- Հնարավորություն տալ սովորողներին դասարանից դուրս առնչվելու նոր հասկացությունների, հմտությունների և համոզմունքների հետ:

- Պարբերաբար գնահատել սովորողների առաջընթացը և արձագանքել նրանց փոփոխվող պահանջմունքներին:
- Ակտիվ մասնակցելով դպրոցի կյանքին՝ նպաստել սովորողների՝ որպես մեծ համայնքի քաղաքացիների, գիտակցված պատասխանատվության աճին:
- Մշտապես անդրադառնալ այն խնդրին, թե սովորողները ինչ գիտելիքների կարիք ունեն և ինչպես են սովորում:
- Ապահովել սովորողներին առաջադիմելու հնարավորություն տվող կրթական պայմաններ:
- Սովորողների, ուսուցիչների, դպրոցի այլ աշխատակիցների, ծնողների և համայնքի անդամների ներգրավումը դպրոցին վերաբերող խնդիրների լուծման գործում՝ համատեղ աշխատելու ուղիներ գտնելով:

Դպրոցի գործունեությունը ապահովում է.

- Հավասարապես, հասանելի, ներառական և որակյալ կրթությունը:
- Անձնական և քաղաքացիական բարձր պատասխանատվությամբ ազատ անհատի ձևավորում:
- Ուսուցիչներ՝ շահագրգիռ, ինքնավստահ և երջանիկ:

Դպրոցական կյանքում համայնքի ներգրավումը աջակցության մեկ այլ աղբյուր է դառնում դրական, արդյունավետ դպրոցական միջավայր ստեղծելու համար: Համայնքի աջակցությունը կարող է բարձրացնել ուսման որակը և դպրոցի արդյունավետության համար նպաստող գործոն դառնալ: Դիտարկելով դպրոցական էկոհամակարգի փոխազդող բաղադրիչները՝ տնօրեն, ուսուցիչ, սովորող և համայնք, տեսնում են փոխհարաբերությունների մի համալիր, որը յուրաքանչյուր դպրոց դարձնում է բացառիկ, և հայտնաբերում ենք ուղիներ և համակարգեր, որոնք հաճախ աննկատ են մնում, քանի որ չափազանց ակնհայտ են:

# 2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

## 2.1. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության (հետայսու հիմնադիր): Դպրոցը հիմնադրվել է 1992 թվականին ֆրանսահայ բարեգործներ Առթին և Միշել Չինգիրյանների և ֆրանսահայ համայնքի ներդրման հաշվին:

2003 թվականին թիվ 29 և թիվ 16 դպրոցները վերամիավորվեցին՝ համաձայն կառավարության որոշման, և դպրոցը վերանվանվեց Դ. Վարուժանի անվան թիվ 16 միջնակարգ դպրոց:

Պետ. ռեգիստր № 222.210.00191, տրված 08.09.2003

Տարրական ընդհանուր I աստիճանի լիցենզիա № 0181 405 աշակերտ:

Հիմնական ընդհանուր I աստիճանի լիցենզիա № 0175 500 աշակերտ:

Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 07.09.2017թ.:

Դպրոցի հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տարոն 4, Զեյթունի փող. 5 շենք:

| Շենքային պայմաններ | Քա-նակ | Ընդհանուր մակերեսը / մ$^2$ | Փաստացի վիճակը |
|---|---|---|---|
| Դասարան (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը) | 18 | 34.1քմ, 41.1քմ, 41.1քմ, 56.1քմ, 56.5քմ, 57.1քմ, 57.6քմ, 57.9քմ, 58քմ, 58.1քմ, 58.6քմ, 59.2քմ, 59.3քմ, 75քմ, 75.5քմ, 79.3քմ, 97.3քմ, 98.4քմ | բավ. |

| | | | |
|---|---|---|---|
| Լաբորատորիա (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը) | 3 | քիմիայի և կենսաբանության - 75քմ<br>ֆիզիկայի - 58.6քմ<br>ԱՐՄԱԹ ինժեներական լաբ.-38.2քմ | բավ.<br>բավ.<br>բավ. |
| Շախմատ | 1 | 57.8քմ | բավ. |
| Առարկայական կաբինետ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը) | 8 | հայոց լեզու-15.1քմ, ռուսաց լ.-38.2քմ<br>անգլերեն - 34.4քմաբ.<br>պատմություն - 35.7քմլավ.<br>մաթեմատիկա - 19.1քմ<br>ՆԶՊ /հրաձգարան/– 86քմ<br>տեխնոլոգիա- 17.8քմ, 19.6քմ | բավ.<br>բավ.<br>բավ.<br>բավ.<br>բավ.<br>բավ. |
| Արհեստանոց | 2 | յուրաքանչյուրը 12քմ | բավ. |
| Գրադարան-ընթերցասրահ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը) | 2 | գրադարան 1 - 38.7քմ<br>գրադարան 1 - 38.7քմ | լավ<br>լավ |
| Համակարգչային սենյակ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը) | 2 | սմարթ դասասենյակ– 78.4քմ<br>համակարգչային դասասենյակ-79.1քմ | լավ<br>լավ |
| Դասարան-խաղասենյակ | 3 | 16.4քմ,<br>16.5քմ,<br>38.6քմ | բավ.<br>բավ.<br>բավ. |
| Մարզադահլիճ | 2 | 343.7քմ<br>343.7քմ | լավ<br>բավ. |
| Հանգստի սենյակ՝ | 1 | 35.1քմ | բավ. |
| Մեթոդական կաբինետ-ուսուցչանոց | 1 | 37.4քմ | բավ. |
| Հանդիսությունների դահլիճ | 1 | 189.8քմ | լավ |

| | | | |
|---|---|---|---|
| Բազմամասնագիտական թիմ (քանակը, յուրաքանչյուրի մակերեսը) | 2 | հոգեբանի սենյակ - 13.7քմ<br>սոց. մանկավարժի սենյակ - 15.5քմ | լավ<br>լավ |
| Բուժկետ | 1 | 13.7քմ | բավ. |
| Ճաշարան | 1 | 253.5քմ | լավ |
| Մարզահրապարակ | 2 | 1600քմ,<br>5500քմ | բավ.<br>բավ. |
| Պահեստային մակերես | 1 | 287.6քմ | բավ. |
| Բակ | 1 | 28408.8քմ | լավ |

## 2.1.1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԶՊ ԱՌԱՐԿԱՅԻ ԿԱԲԻՆԵՏԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| Զինասենյակ<br>Հրաձգարան<br>Թաքստոց | Հարստացնել նյութատեխնիկական բազայի սակավություն |

| Նպատակ |
|---|
| Ստեղծել նյութատեխնիկական բազայով հագեցած կաբինետ |

| Խնդիր |
|---|
| Կազմակերպել շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը |

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխա-նատուներ և մասնակիցներ | Անհրաժեշտ միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | Ձեռք բերել կրակային պատրաստվածության վարժասարք և ստեղծել էլեկտրոնային հրաձգարան | 2024-2025 թթ | ՊՆ, ԿԳՄՍ, տնօրեն, զինղեկ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 2 | Հարստացնել դպրոցի ՆԶՊ-ի կաբինետները անհրաժեշտ ուսումնական նյութերով | 2024-2029 թթ | Տնօրեն, վարչատնտե-սական համակարգող, ՆԶՊ-ի ուսուցիչ | Դպրոցի բյուջե, օրենսդ-րույամբ չարգելվող այլ աղբյուրներ |

| Ռիսկեր |
|---|
| Ոչ մասնագիտական մոտեցում ուսուցիչ-սովորող<br>Ֆինանսական միջոցների պակաս |

| Մեղմող |
|---|
| Մասնագիտական մոտեցում ուսուցիչ-սովորող<br>Արտաբյուջետային միջոցների ձևավորում |

## 2.1.2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՈՒԺԿԵՏԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

<table>
<tr><th colspan="3">Ուժեղ կողմ</th><th colspan="2">Թույլ կողմ</th></tr>
<tr><td colspan="3">Ունի բոլոր անհրաժեշտ պարագաները, որոնք գտնվում են բավարար վիճակում<br>Մեկուսարան</td><td colspan="2">Տրամադրված դեղորայքը (ԱՆ հաստատած ցանկով) քիչ են</td></tr>
<tr><th colspan="5">Նպատակ</th></tr>
<tr><td colspan="5">Բուժկետը դարձնել արդիական:</td></tr>
<tr><th colspan="5">Խնդիր</th></tr>
<tr><td colspan="5">Համապատասխանեցնել ԱՆ հրամանի պահանջներին</td></tr>
<tr><th>№</th><th>Գործողություններ</th><th>Ժամանա-կացույց</th><th>Պատասխանատուներ և մասնակիցներ</th><th>Անհրաժեշտ միջոցներ</th></tr>
<tr><td>1</td><td>Համալրել բուժկետն ԱՆ 28-ը մարտի 2017 №12 հրամանի հավելված 2-ի դեղերի ցանկով</td><td>2024-2029 թթ</td><td>Տնօրեն, բուժքույր</td><td>Պետա-կան բյուջե</td></tr>
<tr><td>2</td><td>Հիգիենայի և ջերմաստի-ճանի պահպանում նորմերին համապատասխան</td><td>2024-2029 թթ</td><td>Տնօրեն, բուժքույր</td><td rowspan="3">Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում</td></tr>
<tr><td>3</td><td>Սովորողների համար անցկացնել զրույցներ «Օրվա ռեժիմ», «Առաջին բուժօգնություն», «Անձնական հիգիենա»-ի մասին</td><td>2024-2029 յուրաքանչյուր կիսամյակ</td><td>Տնօրենություն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, բուժքույր, սովորողներ, ուսուցիչներ</td></tr>
<tr><td>4</td><td>Կազմակերպել «Առողջ օր»: Զեկուցումներ սովորողների շրջանում և դպրոց հրավիրել տարբեր մասնագիտության բժիշկներ:</td><td>2024-2029 յուրաքանչյուր կիսամյակ</td><td>Տնօրենություն, ուսուցիչներ, բուժքույր, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, բժիշկներ, սովորողներ</td></tr>
<tr><th colspan="5">Ռիսկեր</th></tr>
<tr><td colspan="5">Համավարակով պայմանավորված իրավիճակ</td></tr>
<tr><th colspan="5">Մեղմող</th></tr>
<tr><td colspan="5">Համավարակի կանոնների պահպանում</td></tr>
</table>

## 2.1.3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՃԱՇԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| 1-4-րդ դասարանցիները ստանում են կայուն առողջ դպրոցական սնունդ<br>Ճաշարանը ունի անհրաժեշտ նյութատեխնիկական բազա<br>Սանիտարահիգիենիկ պայմանները գտնվում է բարձր աստիճանի վրա | Չկա բուֆետ<br>Քիչ թվով երեխաներ չեն օգտվում ճաշարանից |

| Նպատակ |
|---|
| Դպրոցում ունենալ բուֆետ |

| Խնդիր |
|---|
| Կազմակերպել բոլոր անհրաժեշտ միջոցները բուֆետ ունենալու համար: |

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխանատուներ և մասնակիցներ | Նշում-ներ |
|---|---|---|---|---|
| 1 | Ճիշտ վերահսկողություն սահմանել 1-4-րդ դասարանների կայուն առողջ դպրոցական սնունդ ծրագրում՝ արդյունքում ունենալով լրացուցիչ սնունդ: Լրացուցիչ սնունդ ունենալու դեպքում տրամադրել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող, խոհարար, հաշվապահ | |
| 3 | Խիստ վերահսկողություն սահմանել ճաշարանի սանիտարահիգիենիկ պահանջների ճիշտ կատարմանը: | 2024-2029 թթ | Տնօրեն, բուժքույր, խոհարար | |

| Ռիսկեր |
|---|
| Համավարակով պայմանավորված |

| Մեղմող |
|---|
| Պահպանել համավարակային կանոնները |

## 2.1.4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՖԻԶԻԿԱ, ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԻՄԻԱ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

<table>
<tr><th colspan="3">Ուժեղ կողմ</th><th colspan="2">Թույլ կողմ</th></tr>
<tr><td colspan="3">Հարուստ է ուսումնադիդակտիկ նյութերով, պաստառներով, լաբորատոր նյութերով<br>Կատարվում են տեսափորձեր, որոնք նպաստում են առարկաների ուսանելիության</td><td colspan="2">Լաբորատոր սարքավորումների սակավություն</td></tr>
<tr><th colspan="5">Նպատակ</th></tr>
<tr><td colspan="5">Արդիականացնել նյութատեխնիկական բազան</td></tr>
<tr><th colspan="5">Խնդիր</th></tr>
<tr><td colspan="5">Լաբորատոր աշխատանքները դարձնել ավելի խորքային տեսանելի</td></tr>
<tr><th>№</th><th>Գործողություններ</th><th>Ժամանա-կացույց</th><th>Պատասխանատուներ և մասնակիցներ</th><th>Անհրաժեշտ միջոցներ</th></tr>
<tr><td>1</td><td>Ավելացնել լաբորատոր նյութերը</td><td>2024-2025 թթ</td><td>Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, տնտեսվար, ոլորտի մասնագետներ, ուսուցիչներ</td><td rowspan="2">Դպրոցի բյուջե, օրենդրությամբ չարգելվող այլ աղբյուրներ</td></tr>
<tr><td>2</td><td>Ստուգել լաբորատոր և գործնական աշխատանքների կատարումը բնագիտական առարկաներից</td><td>2024-2029 թթ</td><td>Տնօրենություն, համապատասխան առարկայի ուսուցիչ</td></tr>
<tr><th colspan="5">Ռիսկեր</th></tr>
<tr><td colspan="5">Սովորելու նկատմամբ պասիվություն</td></tr>
<tr><th colspan="5">Մեղմող</th></tr>
<tr><td colspan="5">Սովորողներին մոտիվացնել, խրախուսել</td></tr>
</table>

# 2.1.5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| **Ուժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
|---|---|
| Ունի 2 մարզադահլիճ | Մարզագույքի համալրում |

| **Նպատակ** |
|---|
| Դարձնել ժամանակի պահանջներին համապատասխան մարզադահլիճ |
| **Խնդիր** |
| Մարզադահլիճը հագեցնել մարզական գույքով |

| **№** | **Գործողություններ** | **Ժամանա-կացույց** | **Պատասխա-նատուներ և մասնակիցներ** | **Անհրաժեշտ միջոցներ** |
|---|---|---|---|---|
| 1 | Հարստացնել մարզական գույքով | 2024-2025 թթ | Տնօրեն, վարչատնտեսական համակարգող, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ | Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրներ |
| 2 | Խստորեն վերահսկել դահլիճում անվտանգության սանիտարական կանոնների պահպանումը | 2024-2029 թթ | Տնօրեն, բուժքույր, ֆիզկուլտուրայի ուսուցիչ | |

| **Ռիսկեր** |
|---|
| Սովորողների հետաքրքրության պակաս |
| **Մեղմող** |
| Մոտիվացնող միջոցառումներ |

## 2.1.6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| Ունի արհեստանոց<br>Տեղադրված են տեսախցիկներ<br>«Արմաթ» ինժեներական լաբորատորիա<br>Ունի երկու գրադարան-ընթերցասրահ<br>Ունի առարկայական կաբինետներ<br>Միջոցառումների դահլիճ՝ բավարար կահավորմամբ<br>ԿԱՊԿ ունեցող սովորողների համար դասասենյակ<br>Հրաձգարան<br>Զինասենյակ<br>Գեղեցիկ այգի<br>Սոցմանկավարժի և հոգեբանի սենյակ | Դպրոցի որոշ դասասենյակներ ունեն վերանորոգման կարիք<br>Արդիականացնել հաստատության միջանցքները<br>Որոշ սանհանգույցներ ունեն վերանորոգման կարիք |

| Նպատակ |
|---|
| Ստեղծել առավելագույն պայմաններ, որոնք կնպաստեն սովորողների կրթական կարիքները բավարարելու համար: |

| Խնդիր |
|---|
| Ստեղծել այնպիսի կրթական միջավայր, որը կհամապատասխանի նոր չափորոշչային պահանջներին, համայնքի կարիքներին: |

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխանատուներ և մասնակիցներ | Անհրաժեշտ միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | Դպրոցն ունենա նախակրթարան | 2024-2025 թթ | Տնօրեն, համակարգող, դասվարներ | Դպրոցի բյուջե, արտաբյուջե, օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրներ |

| Ռիսկեր |
|---|
| Ֆինանսական և աշխատանքային ռեսուրսների բացակայություն |

| Մեղմող |
|---|
| Աշխատանքի ոչ ճիշտ պլանավորում |

## 2.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Տնօրենի և կառավարման մարմին ղեկավարումը ներառում է ուսումնական հաստատության առաքելության և նպատակների սահմանում, գործընթացի ուսումնասիրության և համագործակցային մթնոլորտի ստեղծում:

Դպրոցի կոլեգիալ կառավարման մարմինը բաղկացած է 9 (ինը) անդամից: Հաստատության տնօրենը խորհրդի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով:

Համագործակցությունը ենթադրում է, որ հաստատության կառավարման խորհուրդն ու տնօրենը փոխադարձաբար «սեփականացնում» են մեկը մյուսի նպատակը և գործում են միասնաբար, որոնք տալիս են հզոր ներուժ ընդհանուր խնդիրները արդյունավետ լուծելու համար:

- ✓ *Կառավարման խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ:*
- ✓ *Խորհրդի նիստերի արձանագրությունները ներկայացվում են հրապարակման դպրոցի պաշտոնական կայքէջում:*
- ✓ *Խորհուրդը տնօրենի գործունեության նկատմամբ իրականացնում է ընթացիկ վերահսկողություն՝ քննարկում է զարգացման ծրագրի հաշվետվություններն ու արդյունքները:*
- ✓ *Խորհուրդը հաստատել է դպրոցի ներքին կարգապահական կանոնները, կազմակերպական կառուցվածքը, ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի անցկացման կարգը:*
- ✓ *Տնօրենի ներկայացմամբ կառավարման խորհուրդը քննարկում է տարիֆիկացիոն ցուցակները, հաստիքացուցակը, ամենամյա ծախսերի նախահաշիվը, հավանության է արժանացնում և ներկայացնում լիազոր մարմնի հաստատմանը:*
- ✓ *Խորհուրդը յուրաքանչյուր հաշվետու տարվա ընթացքում քննարկում է դպրոցի ուսումնադաստիարակչական գործունեության,*

*ֆինանսատնտեսական, մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները:*

- ✓ *Յուրաքանչյուր ուսպարվա ավարտին խորհուրդն առաջադրում է իր կազմից անդամներ ներքին գնահատման աշխատանքներին մասնակցելու համար:*
- ✓ *Խորհուրդը վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, աջակցում է հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, առնվազն երկու անգամ լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն:*
- ✓ *Առաջարկություններ* է ներկայացնում լիազորված մարմնին հաստատության գործունեության բնագավառին, խնդիրներին և նպատակներին համապատասխան:

| **Ուժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
|---|---|
| Ստանձնում են դպրոցի աշխատանքների պատասխանատվությունը:<br>Մարդկանց արդար, հավասար, արժանապատվությամբ և հարգանքով են վերաբերվում:<br>Կատարում են իրավական և պայմանագրային պարտականությունները:<br>Օրենքներն ու ընթացակարգերը արդար, խելամիտ և ուշադիր են կիրառվում:<br>Հաստատության տնօրենի ներկայացմամբ լսում և հավանություն է տալիս զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը<br>Հաստատում է դպրոցի ներքին կարգապահական, վարքագծի կանոնները<br>Քննարկվում է ներքին և արտաքին արդյունքները<br>Հաստատության տնօրենը աջակցում է հաստատության կառավարման մարմնի աշխատանքներին | Կառավարման խորհրդի կողմից ինքնուրույն նախաձեռնությունների պասիվություն<br>Անդամների կողմից ներքին իրավական ակտերի թույլ իմացություն |

**Նպատակ**

Դպրոցի կառավարման համագործակցության ընդլայնում հաստատության կառավարման մարմնի և տնօրենի միջև

**Խնդիր**

Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի միջև սերտ համագործակցության ամրապնդում:

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխա-նատուներ և մասնակիցներ | Անհրաժեշտ միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | Վերահսկողության մեխանիզմների մշակում, որը կհաստատի խորհուրդը | 2024-2029 յուրաքանչյուր ուստարվա սկիզբ | Տնօրեն, կառավարման խորհուրդ | Ֆինանսական միջոցներ չի պահանջվում |
| 2 | Հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցը սահմանված յուրաքանչյուր գործողության համար հաստատվելու են խորհրդի կողմից | 2024-2029 յուրաքանչյուր ուստարվա սկիզբ | Տնօրեն, կառավարման խորհուրդ | |
| 3 | Մասնակից դարձնել դպրոցում ծագած խնդիրներին | 2024-2029 թթ | Տնօրենություն, կառավարման խորհուրդ | |
| 4 | Ավանդույթ դարձնել և նշել նոր ուսուցչի մուտքը դպրոց, աշխատանքային պայմանագիրը ստորագրելու արարողությանը հրավիրել կառավարման խորհրդին | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, կառավարման խորհուրդ | |

**Ռիսկեր**

Խորհրդի դերի պասիվություն

**Մեղմող**

Խորհրդի անդամների հետ անհատական աշխատանքների կատարում:

Գծապատկերի կողմնամասերը ներկայացնում են ղեկավարման ոճերը, որոնք առաջանում են արդյունքի մասին հոգածության և մարդկանց մասին հոգածության հատումից:




***Վերահսկողական ղեկավարում***

- Սահմանել կազմակերպության առաքելությունը և նվիրվածությունը ստեղծել կազմակերպության նպատակների նկատմամբ:
- Որոշել կազմակերպության խնդիրները և աշխատանք տանել լուծումներ գտնելու ուղղությամբ:
- Կենտրոնանալ իրավիճակի և ընդհանուր նպատակների վրա:
- Գնահատել խմբի կամ թիմի գործադրած ջանքերը:
- Ստեղծել համագործակցային մթնոլորտ:

## 2.3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՐՄԻՆՆԵՐԻ ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Դպրոցն ունի բարելավման և նյութատեխնիկական բազայի հարստացման, անձնակազմի մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացման, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին համապատասխան կրթություն տալու և այլ հիմնախնդիրներ: Համագործակցելով պետական և հասարակական կառույցների հետ ու հաշվի առնելով միջոցների սահմանափակությունը՝ անհրաժեշտ է նախապատվություն տալ այնպիսի ռազմավարության, որոնք հնարավորություն են տալիս՝

ա) համեմատաբար փոքր ներդրումներով ստանալ առավելագույն արդյունք,

բ) առաջնությունը տալ այն արդյունքներին, որոնք հասանելի են համեմատաբար կարճ ժամանակահատվածում,

գ) ստեղծել զարգացումների համար բարենպաստ միջավայր՝ սահմանելով անհրաժեշտ կանոններ, զարգացման ուղիներ, որոնք նաև կխթանեն առանձին կազմակերպությունների ու անհատների նախաձեռնությունները:

Դպրոցը համագործակցում է համայնքի աջակցում է վերջինիս կազմակերպած միջոցառումների անց կացմանը՝ համատեղ շաբաթօրյակներ, ծառատունկ, հանդիպումներ, տոնակատարությունները:

Համայնքի ներկայացուցիչները մասնակցում են դպրոցում անց կացվող միջոցառումներին:

Դպրոցը շտապես համագործակցում է հետևյալ կառույցների և նրանց անդամների հետ:

Համագործակցություն. Տնօրենը պետք է ունենա համագործակցելու գերազանց հմտություն: «Հաղորդակցությունն ամենօրյա գործընթաց է, որը տեղի է ունենում տարբեր մակարդակներում վրա և տարբեր ենթա համակարգերում:

Այն հստակեցնում է կազմակերպության նպատակները, ընթացակարգերը և կանոնակարգերը՝ լուսաբանելով կազմակերպության առանձնահատկությունները և էությունը: Վերահսկողները պետք է կարողանան հաղորդակից դարձնել

հաստատության բոլոր օղակներին, ինչպես նաև համայնքին առկա մտածողություններին և նորություններին:




| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| • Դպրոցի ուսումնական գործընթացը տեղի է ունենում հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների, մանկավարժների, սովորողների, ծնողների փոխադարձ խրախուսման և վստահության պայմաններում<br>• Հիմնադիր, լիազոր մարմին՝<br>Փաստաշրջանառության թափանցիկություն, վերջինիս օրինակելի վարում:<br>Ներքին կանոնակարգի կանոնավորում և հետևում:<br>• Առկա է արդյունավետ համագործակցություն կառավարման մարմինների, ուսուցողական կազմակերպությունների կրթական շահառու կազմակերպությունների հետ: | Ինքնուրույնության պակաս նախաձեռնություններում |

| Նպատակ | | | | |
|---|---|---|---|---|
| Կառավարման արդյունավետության խորացում: | | | | |
| **Խնդիր** | | | | |
| Համագործակցության շրջանակի ընդլայնում: | | | | |
| **№** | **Գործողություններ** | **Ժամանա-կացույց** | **Պատասխա-նատուներ և մասնակիցներ** | **Անհրաժեշտ միջոցներ** |
| 1 | Ակտիվ մասնակցություն կառավարման մամինների համապետական միջոցառումներին օլիմպիադաներ և այլն | 2024-2029 թթ | Տնօրեն մանկավարժական համակազմ, սովորողներ | Դպրոցի բյուջե, օժանդակություն չսահմանված աղբյուրներ |
| 2 | Ստեղծել փաստաշրջանառության հստակ բազա՝ ապահովելու հասանելիությունը կառավարման մարմիններին | 2024-2029 թթ | Տնօրեն մանկավարժական համակազմ, սովորողներ | |
| 3 | Տնային ուսուցում ստացող սովորողներին կցել անհատական օգնականներ ուսումնաճա-նաչողական զբոսանք կազմա-կերպելու համար՝ համագործակցելով լիազոր մարմին և հասարակական կազմակերպությունների հետ | 2024-2029 թթ | Տնօրեն մանկավարժական համակազմ, սովորողներ | |
| **Ռիսկեր** | | | | |
| Արտակարգ իրավիճակներ | | | | |
| **Մեղմող** | | | | |
| Աշխատանքները կազմակերպել հեռավար | | | | |

## 2.4. ԴՊՐՈՑ-ՀԱՄԱՅՆՔ ԿԱՊԸ

Դպրոցն ու համայնքը մեկը մյուսի համար ռեսուրս են դառնում: Կապ է հաստատվում տարբեր գործարար կազմակերպությունների, քաղաքական, հոգևոր սպասարկման ծառայությունների հետ: Կանոնավոր կերպով օգտագործվում են ընտանիքի և համայնքի հետաքրքրությունների, ակնկալիքների և կարիքների մասին տեղեկությունները քաջալերվում և զատորոշվում է համայնքի առաջնորդների հարաբերությունները:

Դպրոցի և համայնքի համագործակցությունը մոդելավորված է:




| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
| --- | --- |
| Ուսումնական հաստատությունը ակտիվորեն համագործակցում է համայնքի հետ՝ մասնակցելով միջոցառումներին:<br><br>Դպրոցը համագործակցում է համայնքապետարանի հետ.<br>• հանրակրթությունից դուրս մնացած երեխաների<br>• ծնողազուրկ երեխաների<br>• կյանքի դժվարին պայմաններ ունեցող երեխաների<br>կյանքի որակը փոխելու համար | Համայնքի միջոցառումների թվի սակավությունը<br><br>Դպրոցի սովորողների մասնակցության պասիվություն համայնքային աշխատանքում |

**Նպատակ**

Զարգացնել դպրոց-համայնք կապը

**Խնդիր**

Դպրոցի հետ առնչվող խնդիրների արդյունավետ լուծման ուղիներ գտնել
Դպրոցի բոլոր սովորողները պետք է մասնակցեն համայնքային աշխատանքներին

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխա-նատուներ և մասնակիցներ | Անհրաժեշտ միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | Ստեղծել հոգաբարձուների և շրջանավարտների խորհուրդ | 2025-2029 թթ | Դպրոց-համայնք | Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ |
| 2 | Միջոցառումներով հանդես գալ ծերանոցում, գրադարաններում | 2024-2029 թթ | Տնօրինություն, մանկավարժական համակազմ, սովորողներ | |
| 3 | Պարբերաբար կազմակերպել հանդիպում քննարկումներ, երկխոսություններ պետական, համայնքային ներկայացուցիչների ծնողներ և դպրոցի միջև՝ առկա խնդիրների բացահայտման նպատակով | 2024-2029 թթ | Դպրոց-համայնք | |

**Ռիսկեր**

Համայնքի պասիվություն

**Մեղմող**

Հետևողական աշխատանք համայնքապետարանի հետ:

## 2.5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

*Դպրոցը ուժեղ է ուժեղ ընտանիքներով*

***Ջ. Միտչել***

Դասավանդման և ուսման գործընթացում ծնողների ակտիվ մասնակցությունը դպրոցի գործունեության ինտեգրալ մասն է:

Կարևոր է ծնողների մասնակցությունը դպրոցի աշխատանքներում, որովհետև դրանով կապ է հաստատվում ուսուցիչների, դպրոցի, ընտանիքների և համայնքների միջև: Համայնքների միջև կապը ստեղծում է դպրոցի հաջողությունը, երբ ծնողները մասնակցում են իրենց երեխաների կրթության գործին.

- Ավելի բարձր ակադեմիական նվաճումներ
- Սովորողների հաճախելիության բարձրացում
- Սովորողների և ծնողների դրական վերաբերմունք դպրոցի նկատմամբ:
- Սովորողների գնահատականների բարձրացում
- Ծնողների բավարարվածություն ուսուցչի աշխատանքից:

*Ծնող-երեխա ուսման, դաստիարակության ու զարգացման գործում դպրոցի առաջին համագործակիցն է, այդ պատճառով անհրաժեշտ է՝*

- Ամենօրյա աշխատանքի արդյունքում ձեռք բերել փոխադարձ վստահություն և հարգանք, ամրապնդել ծնող-դպրոց կապը
- Խթանել ծնողների շահագրգռվածությունը որակյալ կրթություն իրականացնելիս
- Ընդգրկել ծնողներին ուսման կարևորագույն գործառույթներում
- Ներգրավել արտադպրոցական և արտադասարանական դաստիարակչական աշխատանքներին
- Ամրապնդել ծնողական խորհրդի կապը դպրոցի կառավարման խորհրդի և մանկավարժական խորհրդի հետ՝ ապահովելով տեղեկատվության կազմակերպումը և տարածումը
- Աջակցել ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքների բնագավառում
- Կազմակերպել համատեղ հանդիպումներ, սեմինարներ ծնողների համար՝ ներկայացնելով դպրոցի գործունեությունը ու հեռանկարային ծրագրերը,

ուսումնադաստիարակչական աշխատանքները, լսել և քննարկել նրանց հետաքրքրող հարցերը

- Կարևորում եմ ծնողների և մանկավարժական կոլեկտիվի կողմից երեխաների դաստիարակության հարցում միասնական պահանջների ձևավորումը
- Լսելի դարձնել ծնողական խորհրդի առաջարկությունները և ընթացք տալ
- Հնարավորինս ամրապնդել ծնողի և դպրոցի միջև ամուր կապը

Ծնողական խորհուրդը կազմված է 18 անդամից:

| **Ուժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
|---|---|
| Ծնողական օգնություն և աջակցություն<br>Ակտիվ ներգրավում ուսումնադաստիարակչական աշխատանքներին<br>Ծնողները մասնակցում են դպրոցի ներքին կյանքին<br>Օժանդակում են սովորողներին և դպրոցի անձնակազմին<br>Քննարկում ընթացիկ խնդիրներ (տնային հանձնարարություններ և այլն): | Սեփական նախաձեռնության պակաս<br>Որոշ ծնողների ոչ սիստեմատիկ, սահմանափակումը դպրոցի ներքին կյանքին<br>Որոշ ծնողներ ցանկության պակաս ներգրավված է լինելու իրենց երեխաների կրթության գործընթացում |

| **Նպատակ** |
|---|
| Խորացնել ծնողների ներգրավումը դպրոցական կյանքում: |
| **Խնդիր** |
| Սահմանել համագործակցության ուղիներ: |

| **№** | **Գործողություններ** | **Ժամանա-կացույց** | **Պատասխանատուներ և մասնակիցներ** | **Անհրաժեշտ միջոցներ** |
|---|---|---|---|---|
| 1 | Դպրոցը դարձնել հրավիրվող (կազմակերպել խաղ-միջոցառումներ) | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ծնողներ | Ֆինանսական միջոցներ չի պահանջվում |
| 2 | Հարգալից վերաբերվել ծնողական հեռանկարային առաջարկներին, ստեղծել բաց քաղաքակիրթ մթնոլորտ | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ծնողներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Հանդիսավոր նշել դպրոցական կյանքին ծնողների մասնակցությունը | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ծնողներ | Ֆինանսական միջոցներ չի պահանջվում |
| 4 | Ծնողների հետ հանդի-պումների ժամանակացույցն այնպես կազմել, որպեսզի այդ ժամերն առավել հարմար լինեն ծնողներին, նույնիսկ եթե այդքան էլ հարմար չեն ուսուցիչներին | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ծնողներ | |
| 5 | Կարիքի գնահատում անցած սովորողների ծնողների հետ անցկացնել զրույցներ քննարկումներ | 2024-2029 թթ | Տնօրեն, ՏՄԱԿ, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, հոգեբան, դասղեկներ, ծնողներ | |
| 6 | Դարձնել ծնողներին մանկավարժներին հավասար գործընկերներ՝ թույլ տալով դպրոցում որոշումներ կայացնելիս ծնողները ձայն ունենա | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ծնողներ | |
| 7 | Ուղիներ գտնել ծնողների որոշ միասին դպրոց բերելու համար, քանի որ շատերը չգիտեն ինչպես մասնակից դառնալ կամ վախենում են առաջին քայլ անել | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ծնողներ | |
| 8 | Խթանել մասնակցությունը տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից անցկացվող սեմինարներին | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ծնողներ | |
| 9 | Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն ցուցաբերության ակտիվություն | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ծնողներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | Ներդպրոցական և արտադպրոցական տարբեր միջոցառումներին ակտիվ մասնակցություն | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ծնողներ | Ֆինանսական միջոցներ չի պահանջվում |
| 11 | Ներգրավել դպրոցում իրականացվող տարբեր հասարակական աշխատանքներին | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, ծնողներ | |
| 12 | Ստեղծել էլեկտրոնային հարցաթերթիկների բազա և իրականացնել հարցումներ սովորողների և ծնողների շրջանում բացահայտելով թե՛ կրթության որակի գոհունակությունը, թե՛ կարիքների բացահայտումը (առանց կամ թղթային տարբերակով) | 2024-2029 թթ | Տնօրինություն, մանկավարժական համակազմ, ծնողներ | |
| 13 | Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը՝ սովորողների ուսուցման և դաստիարակության բարելավման գործում | 2024-2029 թթ | Տնօրինություն, մանկավարժական համակազմ, սովորողներ, ծնողներ | |

| **Ռիսկեր** |
|---|
| Պայմանավորված համավարակով |

| **Մեղմող** |
|---|
| Շփումները կազմակերպել հեռավար |

## 2.6. ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

***Երեխաներին իրական պատասխանատվություն տալը, ինչպես ասենք՝ որոշումներ կայացնելու պատասխանատվությունը կարող է ավելի շատ նպաստել ողջամիտ արժեքների ձևավորմանը, քան ցանկացած պարգև և արդյունք:***

Աշակերտական խորհուրդը կազմված է 16 անդամից:

Սովորելու անհատական ոճերի, սովորողի ինքնուրույնության և շարժառիթների իրականացման լավագույն ձևը համագործակցական ուսուցումն է: Միասին աշխատելով՝ սովորողները կարող են համատեղ նպատակների հասնել:

Աշակերտական խորհուրդը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որի գործունեության հիմնական սկզբունքներն են՝ կամավորությունը, սովորողների իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը:

Սովորողների ինքնավարության հիմնական խնդիրներն են՝

- համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելը.
- ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը նպաստելը.
- հաստատությունում ժողովրդավարության, սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացմանը նպաստելը.
- սովորողների ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման համար բարենպաստ պայմանների ստեղծմանը օժանդակելը.
- սովորողների իրավունքների և պարտականությունների լիարժեք գիտակցմանն ու իրացմանը օժանդակելը.
- հաստատության սովորողների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը.
- սովորողների առողջության, կյանքի անվտանգության, սոցիալական ապահովության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին աջակցելը և սովորողների նախաձեռնությունների ապահովմանը օժանդակելը.

- հաստատությունում սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանն օժանդակելը.
- երիտասարդ սերնդի, նրա պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, իրավական, ժողովրդավարական պետության կառուցմանը օժանդակելը:




| **Ուժեղ կողմ** | **Թույլ կողմ** |
|---|---|
| Առկա է.<br>Բարենպաստ մթնոլորտ<br>Բարեկիրթ միջանձնային հարաբերություններ<br>Ընտրություն կատարելու ազատություն<br>Մտքերը ազատ արտահայտելու հնարավորություն<br>Բացառվում է ծաղրումը, նսեմացումը<br>Հարգանքով են վերաբերում միմյանց մտքերին<br>Սպորտային միջոցառումների ակտիվ մասնակցություն | Սովորողներին պաշտպանել վտանգավոր տեղեկատվությունից: |
| **Նպատակ** | |
| Խորացնել բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային միջավայրը:<br>Դաստիարակել բարոյական և մտավոր պատասխանատվությամբ անհատներ: | |
| **Խնդիր** | |
| Ապահովել երեխաների զարգացումը, որպես հասարակության, համայնքի անդամներ: | |

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխանատուներ և մասնակիցներ | Անհրաժեշտ միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | Փնտրել և գտնել հովանավորներ: Ունենալու դեպքում՝ սահմանել կրթաթոշակ 8-9-րդ դասարանի գերազանց առաջադիմություն ունեցող սովորողների համար | 2025-2029 | Տնօրենություն, վարչատնտեսական համակարգող, հաշվապահ | Ֆինանսական միջոցներ չի պահանջվում |
| 2 | Ունենալ սովորողների կողմից ստեղծված դասարանական օրենքներ | 2024-2029 թթ | Տնօրենություն, աշակերտական խորհուրդ, սովորողներ | |
| 3 | Վաղ հայտնաբերում հալածանքի, օտարման, բռնության դեպքերը և արագ լուծել խնդիր դարձած հարցերը | 2024-2029 թթ | Տնօրենություն, աշակերտական խորհուրդ, մանկավարժական համակազմ, ծնողներ, սովորողներ | |
| 4 | Հարցաթերթիկների միջոցով պարզել սովորողների ինքնակառավարման և ինքնավարության բարձրացման հիմնախնդիրները | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, աշակեր-տական խորհուրդ | |
| 5 | Սովորողների մեջ սերմանել հայրենասիրություն, առողջ ապրելակերպ, անվտանգ միջավայրին հանդուրժողականությանը, բարեվարքություն և այլն՝ միջոցառումների քննարկումների, էքսկուրսիաների միջոցով: | 2024-2029 թթ | Մանկավարժական համակազմ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6 | 8-9-րդ դասարանների աշակերտների համար կազմակերպել մասնագիտական կողմնորոշման պրակտիկաներ | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, սովորողներ | Ֆինանսական միջոցներ չի պահանջվում |
| 7 | Ձեռնարկատիրական հմտությունների զարգացման նպատակով կազմակերպել ցուցահանդես վաճառքներ | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, սովորողներ | |
| 8 | Ունենալ երաժշտական խումբ, որը ելույթ ունենալ թե՛ դպրոցում, թե՛ մասնակցել համայնքային փառատոններում | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, սովորողներ | |
| 9 | Տարեկան 1 անգամ հայտարարագրել աշակերտական ինքնավարության օրեր | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, սովորողներ | |
| 10 | Կազմակերպել ինտելեկտուալ մրցույթներ դասարանների և այլ դպրոցների միջև | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, ուսուցիչներ, սովորողներ | |
| 11 | Խաղերի կազմակերպում, ընդգրկելով ծնողներին, սովորողներին, ուսուցիչներին | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, սովորողներ | |
| 12 | Այցելություն մշակութային օջախներ, հուշահամալիրներ | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական | ա միջ ոցն եր |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, սովորողներ, ծնողներ | |
| 13 | Բակում ունենալ առանձին տարածք բնության գրկում ինտերակտիվ դասեր իրականացնելու համար | 2024-2029 թթ | Սովորողներ, ուսուցիչներ | |
| **Ռիսկեր** | | | | |
| Հասարակական գործերի նկատմամբ հետաքրքրության պակաս | | | | |
| **Մեղմող** | | | | |
| Մոտիվացնող միջոցառումներ (պարգևատրումներ, խրախուսումներ, պատվոգրեր և այլն) | | | | |



# 2.7. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԲԵՐՈՒՄ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

*«Անգամ սովորեցնելիս մարդիկ սովորում են»*

*Սենեկա*

Սրընթաց փոփոխություններ են տեղի ունենում կրթության բնագավառում:

Այսօր չափազանց կարևոր է մեր կրթական դպրոցական համակարգերի և իհարկե, ուսուցիչների տեսական ու գործնական պատրաստման վերափոխումը: Սա ոչ միայն հայ  հասարակության, այլ նաև համընդհանուր նշանակության խնդիր է: Մեր հասարակության բնույթը, կրթական և դպրոցական համակարգերն ու ուսուցիչների պատրաստումը վերափոխելու և զարգացնելու համար բարձր որակավորում ունեցող մասնագետներ են անհրաժեշտ ինչն անհնար է առանց ուսուցիչների պատրաստման և ծրագրերի նորացման:

Մենք պետք է հաշվի առնենք մեր կրթական համակարգի ներուժը՝ վերականգնելով պատմական ավանդույթները, համայնքների օժանդակությունը:

Այդ նպատակի համար անհրաժեշտ է.

- իմանալ ազգային մշակույթային ժառանգությունը,
- խորապես ուսումնասիրել ժամանակակից գիտության նվաճումները,
- զարգացնել գիտելիքներն ու փորձը:

Ուսուցչի գիտելիքները վճռորոշ նշանակություն ունեն: Այն, ինչ գիտե և կարող է անել ուսուցիչը, ուղղակիորեն անդրադառնում է սովորողների գիտելիքների վրա: Անհրաժեշտ է փոխադարձ կապի մեջ ընկալել երկու կարևորագույն խնդիր՝ սովորեցնել՝ իրոք  սովորելու համար և սովորել լավ սովորեցնելու համար: Կարևոր է նաև հասկանալ, որ լավ ուսուցանելու համար միայն առարկայական գիտելիքները բավարար չեն: Ուսուցիչները պետք է կիրառեն տեսական գիտելիքները սովորողների անհատական և կոլեկտիվ աշխատանքը ղեկավարելիս, հոգալ դասարանի կարիքները, դասարանի կառավարումը զուգակցել բոլոր երեխաների համար խիստ անհրաժեշտ հոգատարության հարգանքի հետ, լավ քաղաքացի

դառնալու համար անհրաժեշտ արժեքներ ձևավորել, ուրվագծել նպատակները, ընտրել դրանք համապատասխան շարժառիթներ, արդյունավետ համագործակցել սովորողների, ծնողների և համայնքի հետ:




Սխեման ճիշտ ընկալելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պայմանականորեն շրջանից վերև պատկերվել են ուսուցչի հնարավոր դերերը, իսկ շրջանի ներքևում՝ այն գիտելիքները, իրազեկություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են այդ դերերը հաջողությամբ իրականացնելու համար:

Լավագույն ուսուցչի ազդեցությունը երբեք չի ավարտվում: Այն հավերժ հոսում է առաջ, ինչպես էվոլյուցիայի հոսանքը՝ շարունակվող սերունդներով: Մեր ամենամեծ խնդիրն է ներկայացնել այս մեծ ճշմարտությունը մեր հայրենակիցների գիտակցության մեջ:

«Վանաձորի Դանիել Վարուժանի անվան թիվ 16 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ն ունի 54 աշխատակից, մանկավարժական և վարչական աշխատող 42, ուսուցիչներ՝ 29, տարակարգ ունեցող 6 ուսուցիչ, կամավոր ատեստավորում անցած 4 ուսուցիչ, վերապատրաստվող 3 ուսուցիչ: Բոլոր ուսուցիչներն ունեն բարձրագույն մանկավարժական որակավորում:

| Տարեթվեր | 2018-2019 | 2019-2020 | 2020-2021 | 2021-2022 | 2022-2023 | Փոփոխությունների դինամիկան |
|---|---|---|---|---|---|---|
| Ուսուցիչների թիվը | 33 | 31 | 32 | 31 | 29 | նվազել է |
| Ուսուցիչների միջին շաբաթական դրույքը | 14.9 | 17.3 | 15.4 | 17 | 18.2 | աճել է |

| Ուսուցիչների տարիքային կազմ | միջին 30 տարեկան | 31-40 տարեկան | 41-50 տարեկան | 51-60 տարեկան | 61 և ավելի |
|---|---|---|---|---|---|
| Քանակ | 2 | 14 | 5 | 6 | 2 |

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| Ուսումնական հաստատությունում դասավանդող բոլոր մասնագետները ունեն բարձրագույն կրթություն<br>Ստանձնելով դպրոցի աշխատանքների պատասխանատվությունը միմյանց վերաբերվում են արդար, արժանապատվությամբ, հարգանքով:<br>Կատարում են իրավական և պայմանագրային պարտականությունները, օրերն ու ընթացակարգերը խելամիտ ու ուշադիր են կիրառում:<br>Մանկավարժական համակազմը գործում է՝ ի կատարումն դպրոցի նպատակների:<br>Մանկավարժները գիտակցում են իրենց մասնագիտական որակավորման բարձրացման ուղղությամբ ակտիվ աշխատելու և ողջ կյանքի ընթացքում սովորելու միջոցով մասնագիտական զարգացման կարևորությունը: | Ուսուցիչների խրախուսման սակավություն<br>Դասապրոցեսում ՏՀՏ գործիքների պասիվ կիրառություն<br>Թիմային աշխատանքի ունակությունների զարգացման պակաս<br>Դպրոցում հանդիպումների հաճախակի կազմակերպման պակաս |

**Նպատակ**

Ապահովել յուրաքանչյուր մանկավարժի կարիքները՝ նրա անհատական առանձնահատկություններին, պահանջմունքներին և անհատի ինքնազարգացման մակարդակին համապատասխան:

**Խնդիր**

Մանկավարժները պլանները մշակում են նոր չափորոշիչների և ծրագրի նպատակների, սովորողների անհատական կարծիքների հիման վրա, հետևողական, համակարգված մոտեցում են դրսևորում յուրաքանչյուր սովորողի առաջադիմության դիտարկմանը և գնահատմանը:

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխա-նատուներ և մասնակիցներ | Անհրաժեշտ միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | Մանկավարժները մշտապես կվերլուծեն, կկշռադատեն իրենց պրակտիկ գործունեությունը, կգնահատեն դրա արդյունավետությունը | 2024-2029 թթ | Տնօրենություն, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | Մասնագի-տական գրականութ-յուն, էլեկտրոնային ռեսուրսներ, ուսումնական ձեռնարկներ, առարկայական չափորոշիչներ, ծրագրեր |
| 2 | Մանկավարժները կօգտագործեն ձեռքի տակ եղած, բոլոր միջոցները՝ յուրաքանչյուր երեխային հասկանալու և գնահատելու համար: | 2024-2029 թթ | Տնօրենություն, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |
| 3 | Մանկավարժները կմշակեն և կներդնեն հայեցակարգային ըմբռնմանն ուղղված զանազան մեթոդներ, որոնք կոչված են նպաստել նորարարություններին, ստեղծագործական մոտեցմանը, ինքնուրույն ուսումնասիրություններին, սոցիալական համագործակցությանը և հետազոտություններին ինչպես առանձին առարկաների շրջանակներում այնպես էլ միջառարկայական ոլորտում: | 2024-2029 թթ | Տնօրենություն, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Մանկավարժները կնպաստեն հոգատար և խթանող մթնոլորտով ներառական դասարանների ստեղծմանը՝ այնպես կազմակերպելով ուսումնական միջավայրը, որ երեխաները ուսումնառության ընթացքում իրենց վրա համարձակություն վերցնեն ժողովրդավարության պայմաններում անհրաժեշտ կյանքի հմտությունների գործնական տիրապետման, կոլեկտիվ և ինքնուրույն աշխատանքի համար օպտիմալ հնարավորություն ունենան: | 2024-2029 թթ | Տնօրենություն, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |
| 6 | Առաջավոր փորձի դասերի կազմակերպում | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |
| 7 | Դպրոցում հանդիպումների հաճախակի կազմակերպում | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |
| 8 | Դպրոցի համար անհրաժեշտ մեթոդական ձեռնարկների և նյութերի ապահովում | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |
| 9 | Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին ամբողջ ուսումնական տարվա ընթացքում օգնության ծրագիր մշակել: | 2024-2029 թթ | Տնօրեն, փորձառու ուսուցիչ մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | Ավելի բարձրացնել հասարակության մեջ ուսուցիչների և դպրոցի հեղինակությունը: | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |
| 11 | Փոխադարձ դասալսումները հատկապես՝ 5-9-րդ դասարանի ուսուցիչների դասեր լսեն բոլոր 4-րդ դասարաններում, որպեսզի տարրական դպրոցի անցումը սահուն ընթանա | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |
| 12 | Մանկավարժները կբացառեն երեխաներին «պիտակներ» կպցնելուն՝ կիրառելով գնահատման բազմազան մեթոդներ: | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |
| 13 | Ավելացնել վերապատրաստվող ուսուցիչների և մենթորների թիվը, դպրոցը դարձնել նորությունների կենտրոն: | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |
| 14 | Դպրոցում ստեղծել սպորտային խմբակներ: | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | |

| **Ռիսկեր** |
|---|
| Մոտիվացիայի պակաս |
| **Մեղմող** |
| Ուսուցիչների խրախուսում |

Մանկավարժական կրթության կարևորագույն խնդիրն է խթանել ինքնուրույնությունը և ինքնակրթությունը, այսինքն՝ սովորել սովորեցնել և, ի վերջո,

ձևավորել ստեղծագործական մտածողություն, որը ապագա ուսուցչի արդյունավետ աշխատանքի գրավականն է:

***Ուսուցչի արդյունավետության բաղադրիչները***




Վերոհիշյալ դրույթները ուսուցման ելակետն են, բայց դրանք ապարդյուն են առանց հետևյալ 4 հիմնական որակների.

- ✓ Արդյունավետ ուսուցիչը պետք է ունենա անձնական այնպիսի որակներ, որոնք նրան հնարավորություն կտան ճշմարիտ մարդկային հարաբերություններ հաստատել իր աշակերտների, ծնողների, գործընկերների հետ, կօգնեն ժողովրդավարական հասարակական արժեքներ ձևավորել թե երեխաների և թե մեծերի համար:
- ✓ Արդյունավետ ուսուցիչը պետք է ձգտի ձեռք բերել երեք կարգի գիտելիքներ առարկայական, մեթոդական, մանկավարժական: Այս գիտելիքները պետք է օգտագործվեն՝ որպես մասնագիտական գիտելիքների և վարպետության ուղեցույց նրանց գործնական աշխատանքում:
- ✓ Արդյունավետ ուսուցիչը պետք է տիրապետի ուսուցման բազմապիսի մեթոդների ու հնարքների, իմանա, թե ինչպես կարելի է խթանել աշակերտների սովորելու շարժառիթները, զարգացնել նրանց հիմնական կարողությունները,

ստեղծագործական մտածողությունը և ինքնուրույնության ձևավորման ճանապարհով զարգացնի ինքնակրթության կարողությունները:

- ✓ Արդյունավետ ուսուցչի առջև դրվում է նաև մանկավարժական հարցերի իմաստավորման և դրանց լուծման եղանակները. Այդ տեսակետից սովորեցնել սովորելը շարունակական կրթություն է, որը տևում է ողջ կյանքի ընթացքում: Դրա շնորհիվ ուսուցիչները կկարողանան «ախտորոշել» մանկավարժական իրադրությունները և տեղին կիրառել իրենց մասնագիտական գիտելիքները՝ խթանելու համար աշակերտների ուսումնառություն և նպաստելու դպրոցի կատարելագործմանը:

## 2.8. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ՈՒ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏՀՏ տեխնոլոգիաների օգտագործելու ունակությունը նույնքան կարևոր է, որքան կարդալը, գրելը: ՏՀՏ տեխնոլոգիաները հզոր գործիք են դարձել սովորեցնելու և սովորելու ձևը փոխելու գործում: Այն կարևորվում է ուսման արդյունավետության բարձրացնելու համար:

Դպրոցն ունի SMART սենյակ՝ բավարար հագեցվածությամբ, որը կիրառում է «ինֆորմատիկա» առարկայի դասաժամերին, գործնական, լաբորատոր, աշխատանքները նպատակային և լիարժեք կազմակերպելու իրականացնելու և տարբեր ինտեգրված համակարգչային դասեր անցկացնելու համար:

ՏՀՏ-ի լիարժեք օգտագործումը հնարավորություն է տալիս թե աշակերտներին և թե ուսուցիչներին օգտվել տարբեր էլեկտրոնային կրթական հարթակներից:

Դպրոցներում տեխնոլոգիա օգտագործելու տասը անհրաժեշտությունները.

1. Աշակերտները սովորում և զարգանում են տարբեր արագությամբ, այսինքն՝ տեխնոլոգիան կարող է անհատականացնել ուսուցումը:

2. Շրջանավարտները պետք է հեշտությամբ տեղեկություններ գնահատեն և փոխանցեն (տեխնոլոգիան խթանում է աշակերտներին քննարկումների մեջ մտնել, կարծիքներ ձևակերպել, և այլն):

3. Տեխնոլոգիան կարող է նպաստել աշակերտների մտածողության և գրավոր արտահայտման քանակի և որակի բարձրացմանը, օրինակ, համակարգչով գրելու դեպքում ավելի հեշտ է դիմել ստեղծագործական և քերականական ռիսկերին, այսինքն՝ աշակերտը չի վախենա սխալ թույլ տալուց:

4. Շրջանավարտները պետք է լուծեն բարդ խնդիրներ: Ավելի բարձր մակարդակի գործընթացային հմտությունները չեն կարող սովորեցվել այդ բառի սովորական իմաստով, դրանք չեն կարող ուղղակիորեն ուսուցչից փոխանցվել սովորողին:

Աշակերտները պետք է իրենք զարգացնեն այդ ունակությունները՝ համապատասխան ղեկավարությամբ:

5. Տեխնոլոգիան կարող է զարգացնել գեղարվեստական արտահայտչականությունը:
6. Տեխնոլոգիան աշակերտներին հնարավորություն է տալիս իմաստալից աշխատանք կատարել (աշակերտները կարիք ունեն դպրոցից դուրս արժեք ունեցող առարկաներ ստեղծելու):
7. Բոլոր աշակերտներն ուզում են ավելի բարձր մակարդակի ու ավելի հետաքրքիր դասախոսություններ և դասեր ունկնդրելու հնարավորություն ունենալ:
8. Աշակերտները պետք է ընտելանան Ինֆորմացիոն դարի գործիքներին (այսօրվա տեղեկատվության արտադրողների մեծ մասը վերափոխում է իր տվյալների ռեսուրսները թվային ֆորմատի և ստեղծում նոր տեխնոլոգիաներ, որպեսզի ավելացնի արագությունը, հզորությունը, և այլն:
9. Դպրոցները պետք է բարձրացնեն իրենց արդյունավետությունը: (Տեխնոլոգիաների վրա հիմնված մեթոդները կարող են և պարտավոր են ազատել ուսուցչին՝ հնարավորություն տալով ժամանակն ու ջանքերը օգտագործել կարևոր աշխատանքը անելու համար, որը պահանջում է մարդկանց միջև փոխներգործություն, ուսումնական միջավայրի մշտական գնահատում և բարելավում):
10. Շրջանավարտները պետք է տեղյակ լինեն դպրոցից դուրս գտնվող ռեսուրսներին և կարողանան օգտագործել դրանք:

| № | ՍՄԱՐԹ ԴԱՍԱՍԵՆՅԱԿ | քանակը |
|---|---|---|
| 1. | Համակարգիչ | 10 հատ |
| 2. | Դյուրակիր համակարգիչ | 2 հատ |
| 3. | էլեկտրոնային գրատախտակ | 1 հատ |
| 4. | Պրոյեկտոր | 2 հատ |
| № | ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԴԱՍԱՍԵՆՅԱԿ | քանակը |
| 1. | Համակարգիչ | 10 հատ |
| 2. | Դյուրակիր համակարգիչ | 2 հատ |
| 3. | Պրոյեկտոր | 1 հատ |
| № | ԱՐՄԱԹ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ | քանակը |
| 1. | Մինի համակարգչի հավաքածու | 5 հատ |
| 2. | Համակարգչի հավաքածու (եռաչափ տպիչի համար) | 1 հատ |
| 3. | Համակարգչի հավաքածու (շիթային և լազերային հաստոցի) | 1 հատ |
| 4. | Եռաչափ տպիչ Բզեզ 2.0 | 1 հատ |
| 5. | Ռոբոտ-կոնստրուկտորի հիմնական հավաքածու | 1 հատ |
| 6. | Նորացման ու գործիքների լրացուցիչ հավաքածու | 1 հատ |
| 7. | Ռոբոտի մեխանիկական և էլեկտրոնային հանգույցների լրացուցիչ հավաքածու | 1 հատ |
| 8. | Ավտոմատացման ու էլեկտրոնիկայի ընդլայնման հավաքածու | 1 հատ |

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|

| | |
|---|---|
| «Արմաթ» ինժեներական լաբորատորիան ակտիվորեն է գործում: SMART սենյակում տեղի են ունենում նորարարական մեթոդներով դասեր:<br><br>Դպրոցում ՏՀՏ-ների կիրառման արդյունքում դասերը ավելի պատկերավոր, նպատակային են դառնում, խթանում են երեխաների մեջ ազատ մտածողությունը, որի արդյունքում աշակերտները շահագրգռվում են նորարարական մեթոդների օգտագործման և տարածման հարցում: | Դասասենյակներում համակարգիչների բացակայություն<br>Էլեկտրոնային գրատախտակների բացակայություն<br>Համակարգչային ծրագրերը թարմացնելու կարիք ունեն<br>Հաճախակի դարձնել ՏՀՏ օգտագործմամբ ցուցադրական, օրինակելի դասերը:<br>Դասասենյակներում համակարգիչների բացակայություն: |

**Նպատակ**

Դասավանդման մոտեցումների արդիականացում և կրթության որակի բարելավում:

**Խնդիր**

Նորարարական տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում:

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխա-նատուներ և մասնակիցներ | Անհրաժեշտ միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | Էլեկտրոնային կրթական ռեսուրսների կիրառում | 2024-2029 թթ | Տնօրեն, գործավար | Համակարգիչներ, պրոյեկտոր, էլեկտրոնային գրատախտակ, ինտերնետ կապ |
| 2 | E-draft.am կայքի օգտագործում, հանրային քննարկման դրված ակտերի լուսաբանում քննարկումների ակտիվ մասնակցություն | 2024-2029 թթ | Տնօրեն, գործավար, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ, ուսուցիչներ | |
| 3 | Համագործակցային աշխատանք ԿՏԱԿ-ի հետ | 2024-2029 թթ | Տնօրեն, գործավար | |

**Ռիսկեր**

| |
|---|
| Աշխատանքի ոչ ճիշտ պլանավորում |
| **Մեղմող** |
| Աջակցություն և միմյանց օգնելու կարողություն |

## 2.9. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

***Ասա ինձ, և ես կմոռանամ,***
***Ցույց տուր, և ես կհիշեմ,***
***Մասնակից դարձրո՛ւ, և ես կսովորեմ:***
***Չինական ասացվածք***

Ուսումնական ծրագիրը «դպրոցի գործունեության կորիզն է», որով մի կրթական համակարգը տարբերվում է մյուսից: Այն գործում է՝ որպես վերջնական նպատակներ սահմանող կազմակերպված ծրագիր:

«Ուսումնական ծրագիր» տերմինը պարունակում է սովորողի կողմից ձեռք բերված ամբողջ փորձը: Ուսումնական ծրագիրն ավելի լայն է սահմանում, այն նախատեսված է սովորողի համար, որը որպես օրգանիզմ փոխազդեցության մեջ է գտնվում դասարանական և արտադասարանական ուսումնական գործունեության մակարդակով»:




Վաղվա օրը ակտիվ, ոգեշնչումով, նոր մտածողությունը մարմնավորող անհատն է, որն ունակ կլինի համարվել նոր՝ փոփոխվող պայմաններին և ինքնուրույն որոշումներ կայացնել: Այսպիսի անհատի կրթությունն ու դաստիարակությունն իրագործելու համար նորանալու կարիք ունեն թե դպրոցն ինքը և թե՛ ուսուցիչը: Այսօր ուսուցիչը գտնվում է բարեփոխումների ու բարելավումների գործընթացի կենտրոնում: Այսպիսով, ճանաչվում ու փաստվում են դասավանդվող ուսուցչի և վարչական աշխատողի կարևորությունը՝ որպես փոփոխությունների տեղական շարժման փոխգործուն օղակներ:

Կրթական չափորոշիչներում շեշտվում և կարևորվում է հանուն փոփոխությունների համագործակցությունը, որը ներառում է մասնավորապես դասավանդող ուսուցչին:

Ուսուցիչը դառնում է բարեփոխումների ջատագով և օրինակ: Երբ ուսուցիչն անցնում է իր առարկայի սահմանները, զգալիորեն մեծանում է մյուս առարկաների մասնագետների հետ կապեր հաստատելու հնարավորություններն ու ներուժը: Այդ կապերը մեծացնում են կրթական համակարգում անցկացվող բարեփոխումների հնարավորությունները և օգնում են սահմանել ընդհանուր նպատակներ, այն է դպրոցը դարձնել աշխատելու և սովորելու համար առավել հաճելի ու նպաստավոր վայր:

Մանկավարժական գործունեության գնահատման գործում չափորոշիչների ներմուծումն ամենևին էլ չի նշանակում այդ գործունեության մեջ «կաղապարների ներմուծում, ընդհակառակը՝ դա պետք է մեծացնի մանկավարժների ստեղծագործական մղումները ու որոնումները»:

- «ախտորոշում» այսինքն բացահայտել սովորողի ներուժը
- արձանագրում, այսինքն բացահայտել սովորողների գիտելիքների ու կարողությունների մակարդակը տվյալ պահին
- կանխորոշում. ախտորոշման և արձանագրման տվյալների հիման վրա կանխատեսել, թե ինչի կարող է հասնել սովորողը:

Ստուգման ու գնահատման մեջ խիստ կարևոր գործոն է ստուգման օբյեկտը, այսինքն՝ այն թե ինչն է ստուգման ենթակա (գիտելիքներ) կարողություններ, հմտություններ, մտավոր գործունեության մակարդակը, ներուժը:

Ըստ միջոցների՝ ստուգումն ու գնահատումը կարելի է դիտարկել մի քանի տեսանկյունից.

1. Կիրառվող միջոցների տեսանկյունից ստուգումն ու գնահատումը կարող են լինել ավանդական, ոչ ավանդական (տեստավորում),
2. Բնույթի տեսանկյունից՝ սուբյեկտիվ, օբյեկտիվ,

3. Կիրառվող տեխնիկական միջոցների տեսանկյունից՝ մեքենայական, ոչ մեքենայական,
4. Ձևի տեսանկյունից՝ գրավոր, բանավոր,
5. Ժամանակի տեսանկյունից՝ նախնական, ընթացիկ, քայլ առ քայլ, ամփոփիչ,
6. Ներգրավվածություն տեսանկյունից՝ անհատական, խմբային, ֆրոնտալ,
7. Ստուգող անձի տեսանկյունից՝ ուսուցչի կողմից, դասընկերոջ կողմից (փոխադարձ գնահատում), ինքնագնահատում:

Այսպիսով.

1. Դպրոցը պետք է անշեղորեն հետևի սովորողների բարոյական դաստիարակությանը:
2. Անհրաժեշտ է հստակ և հատուկ մոտեցում՝ այսպես կոչված «բարդ» սովորողների նկատմամբ:
3. Վերացնել ստանդարտացված կրթական համակարգը և իրականացնել այնպիսի բարեփոխումներ, որոնք թույլ կտան խթանել անհատականության զարգացումը:
4. Սահմանափակել «անգիր անելու» երևույթները կրթական գործընթացում:
5. Դասավանդումը դարձնել սովորողների համար մատչելի, ըմբռնելի և արդյունավետ:
6. Աճող սերնդին հաղորդել հիմնարար գիտելիքներ:
7. Տեսական գիտելիքները զուգակցել գործնական կարողությունների զարգացման հետ:
8. Զարգացնել գիտելիքներն ու տեղեկատվությունն ինքնուրույն ձեռք բերելու կարողություններ:
9. Խթանել ստեղծագործական, քննադատական, վերլուծական, տրամաբանական և ոչ տրամաբանական մտածողությունը:

10. Ձևավորել հստակ, չծանրաբեռնված կրթադաստիարակչական համակարգ՝ հաշվի առնելով ժամանակակից գիտության պահանջներն ու նվաճումները:

*Կրթակարգի ձևաչափը որպես ուսուցչին փրված ընփրության արփացոլում.*

Որքան քիչ յուրահատկություններ և մանրամասներ ունի կրթակարգը, այնքան ավելի մեծ ընտրության հնարավորություն է տրված ուսուցչին՝ փոխելու դասավանդումն ըստ իրավիճակի: Գծապատկերը ցույց է տալիս ուսումնական ծրագրի միջոցով ուսուցչի ընտրության հնարավորության ընդլայնումը:

Կրթակարգի կոնը պատկերող նկարում ուսուցիչը հազիվ թե կարող է տեղում «շարժվել» Վարքային-նպատակային մասում: Շարժվելով դեպի ցանցային և քարտեզավորման տարածք, նա ազատ տեղ ունի շարժելու ձեռքերը, ոտքերը, արմունկները և ծնկները: Կոնի միայն արդյունքներ վերջնամասում և ուսուցիչը կարող ամբողջությամբ տարածվել: Եթե ուսուցչին թույլ է տրվում դուրս գալ ուսումնական ծրագրի կոնից, ոչ մի սահմանափակում չկա, թե ուր և ինչպես նա կարող է շարժվել:



| Տարեթիվ | Գերազանց | Լավ | Բավարար |
|---|---|---|---|
| 2018-2019 ուստարի | 87 | 95 | 170 |
| 2019-2020 ուստարի | 81 | 104 | 199 |
| 2020-2021 ուստարի | 83 | 105 | 203 |
| 2021-2022 ուստարի | 90 | 122 | 211 |
| 2022-2023 ուստարի | 68 | 142 | 242 |

Մարզային, հանրապետական, օլիմպիադաներում ու մարզական, մշակութային մրցույթներին սովորողների մասնակցության վերաբերյալ

| | 2021-2022 ուստարի | 2022-2023 ուստարի |
|---|---|---|
| Մարզային առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը | 12 | 19 |
| Մարզային առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը | 1 | - |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաների մասնակիցների թիվը | 1 | - |
| Հանրապետական առարկայական օլիմպիադաներին մրցանակներ ստացած սովորողների թիվը | 1 | - |
| Մարզային և հանրապետական մարզական ու մշակույթի ոլորտում մրցույթների մասնակիցների թիվը | 89 | 150 |

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
| --- | --- |
| Դպրոցի ուսումնական գործունեության նպատակների և խնդիրների սահմանում<br>Ուսման որակի աստիճանաբար բարելավում<br>Սպորտային օլիմպիադաներում մեծ թվով սովորողների մասնակցություն<br>Ամենամյա քննարկումներ՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների ԱՈւՊ-ների վերաբերյալ<br>Նոր մեթոդների կիրառում<br>Թեմատիկ պլանները համապատասխանում են չափորոշչային և ծրագրային պահանջներին<br>Անցկացվում են՝ մշտադիտարկումներ՝ հայտորոշիչ թեստեր գրավոր աշխատանք տնօրինության կողմից դասալսումներ<br>Հեռավար հարթակից օգտվելու հնարավորություն<br>Դպրոցում թեմատիկ պլանները մշակվում են միասնական<br>Մեթոդական միավորումներում ուսումնասիրվում է փոփոխված չափորոշչի նոր պահանջները և մշակվում են դրանց ներդրման ծրագրերը<br>Ապահովում է ուսուցիչների  շարունակական մասնագիտական աճը:<br>Մեթոդմիավորումները վերահսկվում են թեմատիկ պլանների կատարումը, տնային աշխատանքների ծավալը,, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը | Նորագույն տեխնոլոգիաների դասավանդման պակաս<br>Նախագծային ուսուցման հմտությունների պակաս<br>Առարկայական օլիմպիադաներում քիչ թվով սովորողների մասնակցություն<br>Զգալի մաս են կազմում ոչ շահագրգիռ ուսուցիչները առարկայական միամյակների անցկացման ժամանակ<br>Ուսումնական միջոցառումների սակավություն<br>Տանել հետևողական աշխատանքներ՝ զարգացնելու ԿԱՊԿ ունեցող երեխաների ուժեղ կողմերը: |

| Նպատակ |
| --- |
| Ստեղծել դպրոցական նոր համակարգ, որտեղ ուսուցիչների ջանքերը և բարձր ձգտումները կգնահատվեն և պարևգատրվեն: |

| Խնդիր |
| --- |
| Բարձրացնել կրթության որակը՝ ապահովելով չափորոշչով սահմանված վերջնարդյունքները: |

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխանատուներ և մասնակիցներ | Անհրաժեշտ միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | Մեթոդմիավորումներով մշակել չափորոշչային նոր պահանջների ներդրման հաջորդականությունը | 2024-2025 ուստարվա սկիզբ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումների նախագահներ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 2 | Ցածր առաջադիմությամբ երեխաների համար կազմակերպել երկարօրյա ուսուցում | 2024-2025 ուստարվա սկիզբ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումների նախագահներ | |
| 3 | Նախագծային ուսուցման, հետազոտական աշխատանքների զարգացման գործընթացի համար ստեղծել նպաստավոր միջավայր | 2024-2029 թթ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումների նախագահներ | |
| 4 | Կիրառել գրավոր աշխատանքներ բոլոր առարկաներից 2-9-րդ դասարանի սովորողների համար՝ կազմված մեթոդմիավորումներում, որը արդյունքները կվերահսկի տնօրինությունը | 2024-2029 ուստարի յուրաքանչյուր կիսամյակ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումների նախագահներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | Վերոնշյալ արդյունքների հիման վրա յուրաքանչյուր կիսամյակ կրթական ցուցանիշների մարտավարության մշակում | 2024-2029 թթ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումների նախագահներ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 6 | Ունենալ «Շախմատ» առարկայի խմբակ | 2024-2029 թթ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումների նախագահներ | |
| 7 | Կազմակերպել զուգահեռ դասարանների միջև սպրոտլանդիաներ | 2024-2029 ուստարի յուրաքանչյուր կիսամյակ | Տնօրենություն, մանկավարժական համակազմ, սովորողներ, ծնողներ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ | |
| 8 | ԿԱՊԿ ունեցող սովորողներին մասնակից դարձնել դպրոցում կայանալիք միջոցառումներում | 2024-2029 թթ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ | |
| 9 | Կիրառել տնօրինության կողմից<br>• գրավոր աշխատանքներ<br>• դասալսումներ<br>• նախագծային աշխատանքներ<br>• հայտորոշիչ թեստեր | 2024-2029 թթ | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումների նախագահներ | |
| 10 | Նոր չափորոշիչը սահմանում է | 2024-2029 | Տնօրեն, տնօրենի | չե ցն եր - |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | կարողունակություններ: Ի տարբերություն գործող չափորոշչի, նոր չափորոշիչը ունի վերջնարդյունքների ավելի համակարգված մոտեցում՝ ութ կարողունակությունների տեսքով: Կարողանում է որպես իրավիճակից ելնելով՝ արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձև, որ հիմնվում է տարբեր առարկաներից ձեռք բերված գիտելիքների, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների վրա | թթ | տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ | |
| 11 | Կազմակերպել կարողունակությունների թեմատիկ միջոցառումներ, բաց դասեր՝ շեշտը դնելով բոլոր կարողունակությունների վրա.<br>1. Լեզվական գրագիտություն<br>2. Սովորել սովորելու<br>3. Ինքնաճանաչողական և սոցիալական<br>4. Ժողովրդավարական և քաղաքացիական<br>5. Թվային և մեդիա<br>6. Մշակութային<br>7. Մաթեմատիկական և գիտատեխնիկական<br>8. Տնտեսական | Կազմել ժամանա-կացույց ըստ ուսումնակ ան ամիսների | Տնօրեն, տնօրենի տեղակալ, մանկավարժական համակազմ, մեթոդական միավորումներ, սովորողներ | |

**Ռիսկեր**

1. Արտակարգ իրավիճակներ
2. Ուսումնառության հանդեպ հետաքրքրությունների պակաս
3. Հալածանքի դեպքեր դպրոցում

**Մեղմող**

1. Հեռավար ուսուցում
2. Կրթական որակի և կրթական միջավայրի բարելավում
3. Հալածանքի բացառում, բարենպաստ միջավայրի ստեղծում:

## 2.10. ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

| ԿԱՐԵՎՈՐԵԼ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ | ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ |
|---|---|
| •նպաստել է երեխայի ինքնագիտակցության բարձրացմանը<br>•զարգացնել է ազատ կամքը<br>•խթանել է աշակերտին<br>•զարգացնել է երևակայությունը<br>•տանել է դեպի շրջապատող աշխարհի ավելի խորը ընկալում: | •աշակերտներին ներգրավել որոշումների կայացման գործում<br>•աշակերտները մասնակցեն քննարկումներին, ինչը նպաստում է երեխայի ինքնաճանաչմանն ու ինքնահաստատմանը: |

Սովորողները, պետք է ունենան ընտրություն կատարելու ազատություն, որն էլ բարձրացնում է նրանց ինքնագիտակցությունը և զարգացնում է ազատ կամք: Վանաձորի թիվ 16 դպրոցում, ցանկացած սովորող ազատ է ինչ որ նոր բան փորձելու, դպրոցում նրան քաջալերում են այդ անել՝ առանց վախի զգացողություն ունենալու կամ սխալի համար շփոթվելու: Դասարանում սովորողները ձեռք են բերում ինքնակառավարման հմտություններ և անկախություն:

Խնդիրներ՝

1. ***Ապահովություն*** - Սովորողներն իրենց ապահով զգալը դասարանի կառավարման կարևոր տարրերից է: Նրանք պետք է գան նաև, որ ուսուցիչը ընդունում է իրենց: Չվախենան ուսման ընթացքում ռիսկի դիմելուց: Աշխատել ներդաշնակ, հարգանքով վերաբերվել միմյանց մտքերին: Լինել ուղղամիտ և ունենան իրենց կողմից ստեղծված դասարանական օրենքներ:

2. ***Անհատականություն*** - Սովորողները պետք է ունենան ընտրություն կատարելու ազատություն, որն էլ բարձրացնում է նրանց ինքնագիտակցությունը և զարգացնում է ազատ կամք: Յուրաքանչյուր սովորողի պետք է դիտել՝ իբրև մեկ անհատականության և պայմաններ ստեղծել նրա անհատական տաղանդի և հմտությունների զարգացման համար:
3. ***Պատասխանատվություն*** - Ուսուցիչը պետք է քաջալերի սովորողներին՝ ստանձնել իրենց և ուրիշների սովորելու պատասխանատվությունը:
4. ***Արժանապատվություն*** - Դասարանի բոլոր անդամները պետք է հարգեն իրենց և մյուսների մտքերն ու գործողությունները: Ուսուցիչները պետք է հարգեն երեխային՝ իբրև անհատի, չպետք է վիրավորեն նրա արժանապատվությունը:

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| Բացառվում է ծաղրը, նսեմացումը<br>ԿԱՊԿ ունեցող սովորողների համար կա նպաստավոր պայմաններ<br>Սովորողներին հավասար ուշադրությամբ և հարգանքով են վերաբերվում անկախ նրանց ռասայական, ազգային, կրոնական, սեռային պատկանելությունից, մշակույթից:<br>Առկա է հարգանք յուրաքանչյուր սովորողի մտքերի և դատողությունների նկատմամբ<br>Ընդունվում են սովորողների ընտրության իրավունքը և  դրա իրագործման համար պայմաններ են ստեղծված<br>Ստեղծում են այնպիսի իրավիճակներ, որոնցում սովորողները միմյանց հետ համագործակցեն, հերթով ինչ-որ գործ անեն, դրական արդյունքի հասնելու համար<br>Կրթական միջավայրը անվտանգ է ու հարմարավետ:<br>Դասարանները միանգամայն աշակերտակենտրոն են, նրանցում առկա է սովորող-սովորող, սովորող-ուսուցիչ փոխկապակցվածությունը:<br>Ուսուցչի բարությունը և մարդասիրությունը ճառագում է, նրանք երեխայի հետ վարվում են որպես անհատի, պահպանում են սովորողների համար անհրաժեշտ ու ցանկալի վճռականություն:<br>Դպրոցը ապահովված է ինտելեկտուալ և ֆիզիկական ակտիվությամբ<br>Զարգացած է անկախության և ինքնակառավարման հմտությունները:<br>Կրթական միջավայրը անվտանգ է հարմարեցված է ԿԱՊԿ ունեցող երեխաների կարիքներին, հաշվի է առնվում ֆիզիկական գործունեությունը<br>Ստեղծվում է ջերմ, հստակ  հարաբերություններ սովորողների և ուսուցիչների միջև:<br>Աշակերտները հավասարապես դասարանի տերեր են, համայնքի անդամներ հավասար չափով պատասխանատվություն են կրում դասարանի համար | Կան օրախնդիր զրույցների անհրաժեշտություն<br>Ոչ բոլոր դասղեկներին են տվյալներ հայտնում առօրյա իրադարձությունների և երեխայի ֆիզիկական կամ հուզական վիճակի փոփոխությունների մասին<br>Կան օրախնդիր զրույցների անհրաժեշտություն<br>Սթրեսային իրավիճակներում աշխատանքների կատարելագործում<br>Ստեղծել նպաստավոր պայմաններ ԿԱՊԿ ունեցող երեխաների անհատական տաղանդի և հմտությունների զարգացման համար:<br>Հաշվի նստել երեխային անհատական կարծիքի հետ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| **Նպատակ** | | | | |
| Զարգացնել յուրաքանչյուր երեխայի ինքնատիպությունը և անհատական հնարավորությունները:<br>Դպրոցի ներսում և դպրոցի շրջակայքում չպետք է լինեն ոչ վերահսկվող անկյուններ և տարածքներ:<br>Համերաշխ և անկախ հարաբերություններ ստեղծել ուսուցիչների և աշակերտների միջև: | | | | |
| **Խնդիր** | | | | |
| Կարևորել յուրաքանչյուր երեխայի յուրահատուկ պահանջները:<br>Հավասար, ազատ, ջերմ հարաբերությունների համար նպաստավոր պայմաններ ստեղծել մանկավարժների և սովորողների միջև: | | | | |
| **№** | **Գործողություններ** | **Ժամանա-կացույց** | **Պատասխանատուներ և մասնակիցներ** | **Անհրաժեշտ միջոցներ** |
| 1 | Ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների բարեվարքության կանոնները մանկավարժական խորհրդի հաստատման ներկայացնել | Մանկավարժական խորհրդի առաջին նիստ | Տնօրեն, մանկավարժական խորհուրդ, կառավարման խորհուրդ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 2 | Ընդունել բոլոր, այդ թվում նաև հատուկ կարիքներ ունեցող երեխաների անհատական պահանջմունքները ինչպես նաև դրանց բավարարման նպատակով փոփոխել դասավանդման պրակտիկան | Մանկա-վարժական խորհրդի առաջին նիստ | Տնօրեն, մանկավարժական խորհուրդ, կառավարման խորհուրդ | |
| 3 | Բաց դռների օրերի կազմակերպում | Յուրա-քանչյուր ուստարի | Տնօրենի տեղակալներ, մանկավարժական համակազմ, ծնողներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Կազմակերպել ծնողական ժողովներ՝ երեխայի առաջընթացն ու ձեռքբերումները, ծագող դժվարությունները քննարկելու, ինչպես նաև ծնողների սպասելիքները, նպատակները, մտահոգություններն ու կարծիքները պարզելու համար | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների մանկավարժական համակազմ, ծնողներ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 5 | Խրախուսել ընտանիքի անդամների մասնակցությունը արշավների, էքսկուրսիաների, այցելությունների, մարզական միջոցառումների, ճամբարների կազմակերպումը | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների մանկավարժական համակազմ, ծնողներ | |
| 6 | Մշակել այնպիսի պլաններ, որոնք արտացոլում են երեխաների հետ տարվող աշխատանքային համալիր մոտեցումը, որոնցում միաժամանակ հաշվի են առնվում երեխայի անձի և ֆիզիկական, և ճանաչողական, և հուզական կողմերը: Ինչպես նաև լեզվի իմացության աստիճանը: | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների մանկավարժական համակազմ, ծնողներ | |
| 7 | ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսուցումը և դաստիարակությունը կազմակերպել հենվելով դրական կողմերի վրա, բացահայտելով կարողությունների զարգացման բարձր մակարդակը | 2024-2029 թթ | Տնօրեն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների մանկավարժական համակազմ, ՏՄԱԿ, հոգեբան, մանկավարժական համակազմ, ծնողներ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8 | Ծանր աջակցության կարիք ունեցող երեխաների ուսուցման առարկայական ցանկը կազմելիս առաջնորդվել ոչ միայն նախատեսված հիվանդությունների ցանկով, այլև հաշվի առնել երեխայի մոտ տվյալ հիվանդության անհատական դրևորումները | 2024-2029 թթ | Տնօրենություն, համակարգող՝ կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն, ՏՄԱԿ, հոգեբան, մանկավարժական համակազմ, ծնողներ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 9 | ԿԱՊԿ ունեցող սովորողները, որոնք չեն մասնակցում ֆիզկուլտուրայի դասերին նրանց համար կազմակերպել նախավարժանքներ (ստեղծել ֆիզկուլտուրայի հատուկ խմբակներ) | 2024-2029 թթ | Տնօրենություն, ՏՄԱԿ, հոգեբան, բուժքույր | |
| 10 | Ստեղծել սովորողների վարքագծի կանոններ նրանց մասնակցությամբ | 2024-2029 թթ | Տնօրենություն, տեղակալներ, մանկավարժական խորհուրդ, աշակերտներ, ծնողներ | |
| 11 | Մանկավարժական աշխատողների էթիկայի կանոնները ներկայացնել հաստատման | 2024-2029 թթ | Տնօրեն, մանկավարժական խորհուրդ, կառավարման խորհուրդ | |
| 13 | Ստեղծել ազատ մտքերի արտահայտման միջավայր | 2024-2029 թթ | Տնօրենություն, տեղակալներ, մանկավարժական խորհուրդ, աշակերտներ, ծնողական խորհուրդ, դասղեկ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | Կազմակերպել արտադպրոցական, ներդպրոցական հանդիպումներ | 2024-2029 թթ | Տնօրենություն, տեղակալներ, մանկավարժական խորհուրդ, աշակերտներ, ծնողական խորհուրդ, դասղեկ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 15 | Բացառել հալածանքը, օտարման, բռնության դեպքերը | 2024-2029 թթ | Տնօրեն, տեղակալներ, աշակերտներ, մանկավարժական համակազմ | |
| 16 | Կազմակերպել երեխաների անհատական ցուցահանդեսներ | 2024-2029 թթ | Տնօրեն, տեղակալներ, աշակերտներ, մանկավարժական համակազմ | |

| **Ռիսկեր** |
|---|
| 1. Կախվածություն համակարգչային խաղերից<br>2. Պայմանավորված համավարակով |

| **Մեղմող** |
|---|
| 1. Ծնողների հետ տանել բացատրական աշխատանքներ<br>2. Համապատասխան միջոցառումներ ձեռնարկել, պահպանել կանոնները, հնարավորինս օգտվել հեռավար հարթակից: |

## 2.11. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԴՊՐՈՑՈՒՄ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| Դպրոցն ունի տնօրենի կողմից հաստատված տարահանման պլան<br>Յուրաքանչյուր հարկում կա կրակմարիչներ<br>Միջանցքներում աստիճանավանդակներում և ելքերի վրա կանաչ գույնով փակցված են ուղղությունը ցուցադրող սլաքներ և ելքի նշաններ | Կրակմարիչները հին են<br>Դպրոցը չունի մանկական հակագազեր<br>Հակագազերի թվի պակասություն |

| **Նպատակ** |
|---|
| Բարձրացնել անվտանգության մշակույթի զարգացումը |
| **Խնդիր** |
| Անվտանգությունը դարձնել սովորողների մանկավարժական համակազմի կենսակերպի մի մաս |

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխանատուներ և մասնակիցներ | Անհրաժեշտ միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | Անցկացնել ԱՌՆ (աղետների, ռիսկերի նվազեցման) զրույցներ բաց դասեր | 2024-2029 յուրաքանչյուր կիսամյակ | Տնօրեն, զինղեկ, ծնող, սովորող, մանկավարժական համակազմ | Ֆինանսական միջոցներ չեն պահանջվում |
| 2 | Հակահրդեհային վահանակների թարմացում | 2024-2025 թթ | Տնօրենություն, զինղեկ | |
| 3 | Տարհանման նշանների բացատրություն, | 2024-2029 յուրաքանչյուր կիսամյակ | Մանկավարժական աշխատողներ, սովորողներ | կական միջոցներ չեն պահա |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | տարիհանումներ | | | |
| 4 | Ապաստարանները, նկուղները ազատել ոչ պետքական իրերից | 2024-2025 թթ | Տնօրեն, տնտեսվար, զինղեկ | |

| |
|---|
| **Ռիսկեր** |
| Ոչ բավարար ֆինանսական միջոցներ |
| **Մեղմող** |
| Գտնել ֆինանսավորող կազմակերպություններ, հովանավորներ |

## 2.12. ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

***«Միայն ժողովրդական կրթության միջոցով կարող է կերտվել քաղաքակրթության զարգացման կառույցը»:***

***Էնդրյու Քարնեգի***

Մանկավարժները պետք է համապատասխանեն կրթական բարձր չափանիշներին, ունենան դասավանդելու կոչում, շնորհ, ինչպես նաև մասնագիտական կրթություն ու պատրաստություն:

Կամավոր ատեստավորման միջոցով նախատեսված է բարձրացնել ուսուցիչների աշխատավարձը՝ ապահովելով մասնագիտական մրցունակությունը:

Աշխատավարձը պետք է կախված լինի ուսուցչի մասնագիտական գործունեության որակից: Աշխատավայրի պաշտոնի կարգավիճակի բարձրացման հետ կապված բոլոր որոշումները պետք է կայացվեն ուսուցիչների գնահատման արդյունավետ համակարգի կիրառման հիման վրա, որը կներառի դասալսումներ, դիտարկումներ և գնահատման այլ մեխանիզմներ, ինչպես նաև հնարավորություն կտա պարգևել լավագույն ուսուցիչներին, խրախուսել միջին մակարդակի ուսուցիչներին և բարելավել կամ դադարեցնել ցածր մասնագիտական կարողություններ ունեցողների գործունեությունը:

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| Տնօրենությունը ուսուցիչներին ներառում է այն բոլոր հարթակներում, որը ինքնակրթության լայն հնարավորություն է տալիս<br><br>Աշխատակազմը խրախուսվում է պատվոգրերով, շնորհակալագրերով<br><br>Մեթոդմիավորումների միասնական աշխատանք | Նախաձեռնություններում պասիվ մասնակցող աշխատակիցներ<br><br>Պահպանողական մտածողությամբ ուսուցիչներ |

**Նպատակ**

Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների շրջանակների լայնացում

**Խնդիր**

Կիրառել նոր միջոցներ աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության համար

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխա-նատուներ և մասնակիցներ | Անհարժեշտ միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | Բարձրացնել հասարակության մեջ դպրոցի և ուսուցիչների հեղինակությունը | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական մեթոդական միավորումներ, ուսուցիչներ | Ֆինանսական միջոց չի պահանջվում, պատվոգրեր, շնորհակալագրեր |
| 2 | Մշակել խորհրդակցական մարմինների հետ միասին աշխատակազմի խրախուսման համակարգ և իրականացնել՝ նախատեսելով տարեկան նախահաշվում որոշակի գումար | 2024-2029 թթ | Տնօրենություն, մանկավարժական մեթոդական միավորումների նախագահներ, վարչատնտեսական համակարգող | Դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրներ |

**Ռիսկեր**

Աշխատակիցների կողմից ինքնագնահատականի սուբյեկտիվություն

**Մեղմող**

Լուսաբանել և հիմնավորել՝ ապահովելով թափանցիկություն

Բարձր մակարդակով ՀՊՉ ներդրումը իրականացնելու համար անհրաժեշտ է՝

- Համագործակցել ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ
- Մասնակցել վերապատրաստումների
- Օգտվել ԿԶՆԱԿ-ի բլոգում առկա ուսումնական նյութերից
- Մասնակցել փորձի փոխանակմանը միտված ծրագրերի

Մանկավարժների գնահատման նոր նշաձողի սահմանում

Դպրոցի մանկավարժական համակազմի որակական բարելավում՝

- Կազմակերպման և ղեկավարման մեխանիզմների մշակում, որը պետք է ուղղված լինի մանկավարժների մասնագիտական որակավորման մակարդակի հետագա բարձրացմանը:
- Նորմատիվ իրավական և կազմակերպական այնպիսի նախադրյալների ստեղծում, որոնք կապահովեն դպրոցի մանկավարժական համակազմի մեթոդական աշխատանքի որակական բարելավումը:
- Մանկավարժներին աջակցել՝ մշակելու, ներկայացնելու և տպագրելու իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութեր:
- Շահագրգռել մանկավարժներին՝ կատարել հետազոտական աշխատանքներ, ստեղծել պայմաններ մանկավարժների փորձարարական աշխատանքների իրականացման համար:
- Մեթոդական աշխատանքների հիմնական ուղղությունների և բովանդակության համակարգում:
- Մանկավարժների մեթոդական աշխատանքների պահանջների բարձրացում:
- Մանկավարժների մեթոդական մշակումների մրցունակության ապահովում:
- Մանկավարժների հետազոտական գործունեության թեմատիկայի և բովանդակության համակարգում:
- Ուսուցիչների մասնակցություն կամավոր ատեստավորման:
- Դպրոցի մանկավարժական կազմին մշտապես տրամադրել մեթոդական, մասնագիտական գրականություն, ուսումնական առարկաների դասավանդմանն ուղղված մեթոդական ցուցումներով և հրահանգներով:
- Կրթության նորացված բովանդակության մշակում և ներդրում

- Մշտապես կազմակերպել ուսուցիչների վերապատրաստում ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակա կառույցներում: Վերապատրաստումն իրականացնել երկու ուղղությամբ՝ մշտական վերապատրաստում, որը նպատակաուղղված կլինի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների կատարելագործմանը, և հերթական վերապատրաստում, որը պետք է օժանդակի ուսուցչի ատեստավորման գործընթացի դժվարությունների հաղթահարմանը:
- Ուսումնասիրել վերապատրաստում անցած ուսուցիչների մանկավարժական աշխատանքային արդյունավետությունը:

***Վերահսկողի ամենակարևոր դերերից մեկը ուսուցիչներին խրախուսելն է, որը նպաստում է վերջիններիս հասպապության լիարժեք անդամներ դառնալուն: Խրախուսանքը մեծանում է մարդու կարևոր գործ կատարելու ձգտումը: Որն էլ անձին բերում է ինքնագնահատման, ինքնավստահության և սեփական կարևորության գիտակցման:***

***Խրախուսելու ունակությունը հույժ կարևոր է շարունակական բարեփոխումների և զարգացման ապահովման համար:***

## ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ

## 1. ԱՆՁԻ՝ ՈՐՊԵՍ ԱՆՀԱՏԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

| | Օպտիմալ մակարդակ (4 միավոր) | Միջին, թույլատրելի մակարդակ (3 միավոր) | Նվազագույն մակարդակ (2 միավոր) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1.1 | Նյարդային համակարգի ուժեղ, հավասարակշռված տիպ | Նյարդային համակարգի ուժեղ անհավասարակշռված տիպ | Նյարդային համակարգի թույլ, իներտ տիպ |
| 1.2 | Առաջնորդության միտում | Իշխանատենչություն | Դեսպոտիզմ |
| 1.3 | Վստահություն սեփական ուժերի նկատմամբ | Ինքնավստահություն | Ինքնասիրահար-վածություն |
| 1.4 | Պահանջկոտություն | Անհանդուրժողա–կանություն | Դաժանություն |
| 1.5 | Բարեսրտություն, բարեխղճություն | Անբավարար ինքնուրույնություն | Չափից դուրս հաշտվողականություն |
| 1.6 | Հիպերտիմություն | Մանրախնդրություն | Գրգռվողականություն և ցուցադրականություն |
| 1.7 | Հուզականություն | Արգելակում | Տագնապ |

# 2. ՈՒՍՈՒՑԻՉԸ ԵՎ ՄԻՋԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | Օպտիմալ մակարդակ (4 միավոր) | Միջին, թույլատրելի մակարդակ (3 միավոր) | Նվազագույն մակարդակ (2 միավոր) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 2.1 | Շփման, հաղորդակցման ժողովրդավարական ոճի գերակայություն | Շփման մեջ ավտորիտար ոճի գերակայություն | Շփման, հաղորդակցման ազատական ոճի գերակայություն |
| 2.2 | Սկզբունքային հարցերում կառուցողական հակասությունների առկայություն | Սովորողների և գործընկերների հետ հակասությունների լրիվ բացակայություն | Շատ հարցերում մշտական դեստրուկտիվ հակասություններ |
| 2.3 | Գործընկերների հետ համագործակցության ձգտում | Գործընկերների հետ մրցակցության ձգտում | Մշտական հարմարվողականություն և կոնֆորմիզմ |
| 2.4 | Նորմալ ինքնագնահատում | Սեփական անձի թերագնահատում | Սեփական անձի գերագնահատում |
| 2.5. | Կոլեկտիվում մեկուսացման զրոյական մակարդակ | Մեկուսացում (10% -ի սահմաններում) | Մեկուսացում (10%ից ավելի) |

# 3. ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՁԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԾԵՐԸ

| | Օպտիմալ մակարդակ (4 միավոր) | Միջին, թույլատրելի մակարդակ (3 միավոր) | Նվազագույն մակարդակ (2 միավոր) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 3.1. | Բազմակողմանի գիտակցություն և նյութի ազատ շարադրում | Միայն իր առարկայի իմացություն | Աշխատանք միայն կոնսպեկտներով |
| 3.2. | Սովորողների հոգեբա-նական և տարիքային առանձնահատկութ-յունների հաշվառում | Սովորողների հոգեբա-նական և տարիքային առանձնահատկությունների իմացություն | Սովորողների հոգեբա-նական և տարիքային առանձնահատկություննե րի չիմացություն |
| 3.3 | Խոսքի արագությունը (րոպեում 120-130բառ), ճիշտ արտասանություն, ընդհանուր և մասնագի-տական գրագիտություն | Խոսքի արագությունը (րոպեում 120 բառից պակաս) ցածրաձայն, մասնակի վրիպումներ | Խոսքի արագությունը (րոպեում 150 բառից ավելի) անըմբռնելի խոսք, բառերի վերջա-վորությունները «կուլ է տալիս» և այլն |
| 3.4 | Բարեկիրթ արտաքին, արտահայտիչ դիմախաղ և շարժուձև | Սովորական արտաքին, դիմախաղի և շարժուձևի բացակայություն | Փնթի արտաքին, անհամապատասխան դիմախաղ և չափազանց ակտիվ շարժուձև |
| 3.5 | Սովորողներին անունով է դիմում | Սովորողներին ազգանունով է դիմում | Սովորողներին անհասցե է դիմում |
| 3.6 | Վայրկենապես արձագա-նքում է իրավիճակին, հնարամիտ է | Մի քիչ դանդաղ է արձագանքում, հնարամիտ է | Հնարամտության բացակայություն, թույլ արձագանք |
| 3.7 | Հստակ նպատակների ձևակերպման կարողություն | Միայն ընդհանուր նպատակները սահմանելու կարողություն | Հստակ նպատակադրման կարողության բացակայություն |
| 3.8 | Միանգամից բոլոր սովո-րողների ուսումնական աշխատանքը կազմակերպելու կարողություն | Սովորողների մեծամասնության ուսումնական աշխատանքը կազմակերպելու կարողություն | Միայն առանձին սովորողների հետ աշխատելու կարողություն |
| 3.9 | Մշտապես ստուգում է ուսումնական նյութի ըմբռնման աստիճանը: | Պարբերաբար ստուգում է ուսումնական նյութի ըմբռնման աստիճանը: | Բացատրության ընթացքում երբեք չի ստուգում ուսումնական նյութի ըմբռնման աստիճանը: |

# 4. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

| | Օպտիմալ մակարդակ (4 միավոր) | Միջին, թույլատրելի մակարդակ (3 միավոր) | Նվազագույն մակարդակ (2 միավոր) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 4.1 | Ուսումնական պարապմունքների արդյունավետությունը 85%-ից բարձր է: | Ուսումնական պարապմունքների արդյունավետությունը 65-84% է: | Ուսումնական պարապմունքների արդյունավետությունը 45-64% է: |
| 4.2 | Աշխատում է բարձր պահանջներին համապատասխան: | Աշխատում է միջին պահանջներին համապատասխան: | Աշխատում է ցածր պահանջներին համապատասխան: |
| 4.3 | Ուսումնառության փաստացի մակարդակը 64-100 % է: | Ուսումնառության փաստացի մակարդակը 36-63 % է | Ուսումնառության փաստացի մակարդակը 36%-ից ցածր է |
| 4.4 | Ուսուցչի վարկանիշը 4,4 միավոր է և ավելին: | Ուսուցչի վարկանիշը 3,8-4,3 միավոր է: | Ուսուցչի վարկանիշը 3,8 միավորից ցածր է: |
| Առավելագույնը | 100 միավոր | 75 միավոր | 50 միավոր |

Աղբյուր՝ Н. Б. Басова. с. 390-392.

Ուսուցիչների գնահատման ռուբրիկ

| **Աշխատանքներ** | **4** | **3** | **2** | **1** |
|---|---|---|---|---|
| Դասավանդում, ուսուցում | | | | |
| Օրվա դասի պլանավորում | | | | |
| Նախագծերի վարում | | | | |
| Գրավոր աշխատանքների ստուգում | | | | |
| Դասալսումներ | | | | |
| Մանկավարժության զարգացման ծրագրեր | | | | |
| Հետազոտական աշխատանքներ | | | | |
| Նորարարությունների մասնակցություն | | | | |
| ՏՀՏ գործիքակազմի կիրառում | | | | |
| Դասարանի կառավարում | | | | |

## 2.13. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտը կարևորվում է որպես երկրի կայուն զարգացման ինչպես նաև մարդկային կապիտալի ապահովման և վերարտադրության նախապայմաններից մեկը: Հավասարապես մատչելի որակյալ կրթության ապահովման և կրթության ոլորտի արդյունավետության բարձրացման նպատակով երկրում իրականացվում են բարեփոխումների ծրագրեր՝ կրթական բոլոր մակարդակներում: Ուստի այս ոլորտի զարգացումը ներկայումս երկրի զարգացման առաջնային գերակայությունն է: Կրթության ոլորտի զարգացման քաղաքականությունը պետք է ուղղված լինի այն բանին, որ բարեփոխումների արդյունքները նշանակալի ազդեցություն ունենան երկրի տնտեսական աճի, աղքատության կրճատման, անհավասարության մեղման, էկոլոգիական անվտանգության ապահովման և մարդկային զարգացման գործընթացների վրա ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հեռանկարում:

- ✓ Ուսուցման որակի բարձրացման և ուսումնական հաստատության առաքելությունն ապահովելու համար առաջնահերթություններից է դպրոցի նյութատեխնիկական ուսումնամեթոդական բազայի համալրումը, նորագույն տեխնոլոգիաների ներդրումը (լաբորատոր, սարքավորումներ, համակարգչային տեխնիկա, ինտերնետ և այլն):
- ✓ Ուսուցիչների շարունակական վերապատրաստումները, նրանց որակավորման բարձրացման չափորոշիչների համապատասխանեցումը կրթական նոր ծրագրերին:
- ✓ Խոցելի խմբերի երեխաների համար հավասար հնարավորություններ ստեղծելու տեսանկյունից առաջնահերթ է նաև ներառական կրթության համակարգի ներդրման զարգացումը:
- ✓ Դպրոցահասակների շրջանում առողջ ապրելակերպի սկզբունքների շարունակական ամրապնդման նպատակով, կարևորվում է ուսումնական հաստատության «Առողջ ապրելակերպ» դասընթացի հայեցակարգն ուղղված է կրթության իրականացման ամբողջ ժամանակաշրջանում սովորողների

առողջության անվտանգության ապահովության հետ կապված խնդիրների արտածմանը, դրանց լուծման ուղիների կանոնակարգմանը: Դասընթացի նպատակը սովորողների մեջ սեփական և այլոց առողջության՝ որպես կարևորագույն արժեք գնահատելու որակ և այլն պահպանելու վարքագիծ ձևավորել է:

Զարգացման ծրագրի առաջադրված նպատակներին հասնելու համար պետք է համապատասխանեցնել ֆինանսական, մարդկային և նյութական ռեսուրսները:

Յուրաքանչյուր տարվա ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը, հաստիքացուցակը, եռամյա հաշվետվությունները հաստատվելուց հետո դրվում է դպրոցի պաշտոնական կայք էջում՝ https://vanadzor16.schoolsite.am/:

***<u>2021թ ֆինանսավորումը պետական բյուջեից՝ 94.450.100 ՀՀ դրամ</u>***




Ուսուցիչների ընդհանուր թվի հարաբերությունը աշակերտների թվին՝ 1/15:

***2022թ. ֆինանսավորումը պետական բյուջեից՝ 79.105.000 ՀՀ դրամ***




Ուսուցիչների ընդհանուր թվի հարաբերակցությունը աշակերտների թվին՝ 1/16:

## 2.13.1 ՄԱՐԴԿԱՅՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| | |
|---|---|
| 1-ին դասարան | 53 սովորող |
| 2-րդ դասարան | 50 սովորող |
| 3-րդ դասարան | 61 սովորող |
| 4-րդ դասարան | 58 սովորող |
| 5-րդ դասարան | 62 սովորող |
| 6-րդ դասարան | 61 սովորող |
| 7-րդ դասարան | 47 սովորող |
| 8-րդ դասարան | 53 սովորող |
| 9-րդ դասարան | 44 սովորող |

| Տարեթիվ | Սովորողների թիվ | ԿԱՊԿ ունեցող սովորողների թիվ |
|---|---|---|
| 2018-2019 ուստարի | 415 | 40 |
| 2019-2020 ուստարի | 439 | 41 |
| 2020-2021 ուստարի | 455 | 29 |
| 2021-2022 ուստարի | 473 | 31 |
| 2022-2023 ուստարի | 488 | 33 |

| Ուժեղ կողմ | Թույլ կողմ |
|---|---|
| Աշխատավարձի, հարկերի, ժամանակին և կանոնավոր վճարում:<br>Դպրոցը պետական բյուջեից ստանում է կայուն ֆինանսական միջոցներ:<br>Դպրոցի ֆինանսական գործունեությունը հստակ է և թափանցիկ:<br>Գերծախսեր չկան<br>Ֆինանսական պարտքեր չկան | Հովանավորչական միջոցների բացակայություն<br>Դրամաշնորհային միջոցների բացակայություն |

| Նպատակ |
|---|
| Ունենալ արդյունավետ և հստակ ֆինանսական գործունեություն |

| Խնդիր |
|---|
| Փնտրել գտնել հովանավորներ, հիմնադրամներ, բարերարներ: |

| № | Գործողություններ | Ժամանա-կացույց | Պատասխանատուներ և մասնակիցներ | Անհրաժեշտ միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | Մասնակցել դրամաշնորհային ծրագրերի | 2024-2029 թթ | Տնօրեն, անձնակազմ | Արտաբյուջե, օրենսդրությամբ չարգելվող այլ աղբյուրներ |
| 2 | Գտնել հովանավորներ, բարերարներ | 2024-2029 թթ | Տնօրեն | |
| 3 | Իրականացնել դպրոցի տարածքից վարձակալություն (պար, սպորտ) | 2024-2029 թթ | Տնօրեն | |

| Ռիսկեր |
|---|
| Արտաբյուջետային միջոցների սղություն: |

| Մեղմող |
|---|
| Հնարավորինս շատ քանակությամբ շահագրգիռ կողմերի ներգրավվածություն: |

## 12.14. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

| | ՈԼՈՐՏ | ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ |
|---|---|---|
| 1 | Ուսումնական ֆիզիկական միջավայր | Նյութատեխնիկական բազայի աղքատությունը, ուսուցման գործընթացի և կրթության որակի վրա բացասաբար ազդող գործոններից է: |
| 2 | Կառավարման և խորհրդակցական մարմիններ: | Խորհուրդների թույլ համագործակցությունը և անդամների նախաձեռնող չլինելը բացասաբար են ազդում ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունավետության մեխանիզմների կատարման վրա: |
| 3 | Աշակերտական համակազմ | Սովորողների ուսման և դաստիարակության վրա բացասաբար են ազդում ուսման հանդեպ մոտիվացիայի պակասը: |
| 4 | Համագործակցությունը համայնքի կրթության կառավարման ղեկավար մարմինների և հաշվառու կազմակերպությունների հետ: | Դպրոցական կյանքում համայնքի ներգրավման պասիվությունը բացասաբար է անդրադառնում սովորողների հասարակական կյանքին ներգրավվելու գործին: |
| 5 | Մանկավարժական համակազմը | Ուսուցման արդյունավետության վրա բացասաբար են անդրադառնում ուսուցիչների աշխատանքային պարտականություններին ոչ լիարժեք տիրապետելը, նոր տեխնոլոգիաների քիչ օգտագործումը դասերի ժամանակ, ոչ աշակերտակենտրոն ուսուցումը, անհատական ուսուցումը ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ, կատարելու դժվարությունները: |
| 6 | Ուսումնական միջավայր | Բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի բացակայությունը, հալածանքի, օտարման, |

| | | |
|---|---|---|
| | | բռնության առկայությունը, աշակերտ-ծնող-ուսուցիչ կապի պասիվությունը կդառնա սովորողների առաջադիմության թուլացման և դպրոցից արտահոսքի պատճառ: |
| 7 | Կրթության որակ | Կրթության ցածր որակի պատճառ են հանդիսանում մանկավարժների չափորոշչային և ուսումնական ծրագրերին ոչ լիարժեք տիրապետումը մանկավարժների և սովորողների արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման բացակայություն, նրանց աշխատանքային, կրթական կարգապահության և պատասխանատվության բացակայությունը: |
| 8 | Տեխնոլոգիաներ և նորարարություններ | ՏՀՏ օգտագործման միջոցով ուսման որակի բարձրացման ապահովմանը խանգարում է համակարգչային տեխնիկայի քիչ քանակությունը և ուսուցիչների համակարգչային տեխնիկայի թույլ տիրապետումը: |

# 4. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

| № | ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԸ | |
|---|---|---|
| | **Արդյունքի գնահատականը** | **Արդյունքի գնահատման չափանիշները** |
| 1 | **Կրթության որակի և առաջադիմության վրա, ուսումնադաստիարակչական աշխատանքի ազդեցությունը** | |
| | 4 (շատ արդյունավետ) | Դպրոցական համակարգերը սովորողների ուսումնական առաջընթացը դիտարկելու մշտապես միջոցներ է ձեռք առնում:<br>Բոլոր մակարդակներում սովորողների գործունեության, կատարման գնահատումը մշտապես է համապատասխանում նրանց ուսումնառության նպատակներին:<br>Ուսուցիչների դպրոցի ղեկավարությունը մշտապես են օգտագործում ստուգման տեստերի արդյունքները, հաշվետվություններն ու հաճախումների հաշվառումները: |
| | 3 (արդյունավետ) | Դպրոցական համակարգերը սովորողների ուսումնական առաջընթացը դիտարկելու պարբերաբար միջոցներ է ձեռք առնում:<br>Բոլոր մակարդակներում սովորողների գործունեության, կատարման գնահատումը հաճախակի է համապատասխանում նրանց ուսումնառության նպատակներին:<br>Ուսուցիչների դպրոցի ղեկավարությունը պարբերաբար են օգտագործում ստուգման տեստերի արդյունքները, հաշվետվություններն ու հաճախումների հաշվառումները: |

| | | |
|---|---|---|
| | 2 (քիչ արդյունավետ) | Դպրոցական համակարգերը սովորողների ուսումնական առաջընթացը դիտարկելու երբեմն միջոցներ է ձեռք առնում:<br>Բոլոր մակարդակներում սովորողների գործունեության, կատարման գնահատումը երբեմն չի համապատասխանում նրանց ուսումնառության նպատակներին:<br>Ուսուցիչների դպրոցի ղեկավարությունը հազվադեպ են օգտագործում ստուգման տեստերի արդյունքները, հաշվետվություններն ու հաճախումների հաշվառումները: |
| | 1 (անարդյունավետ) | Դպրոցական համակարգերը սովորողների ուսումնական առաջընթացը դիտարկելու միջոցներ երբեք ձեռք չի առնում:<br>Բոլոր մակարդակներում սովորողների գործունեության, կատարման գնահատումը բացարձակապես չի համապատասխանում նրանց ուսումնառության նպատակներին:<br>Ուսուցիչների դպրոցի ղեկավարությունը երբեք չեն օգտագործում ստուգման տեստերի արդյունքները, հաշվետվություններն ու հաճախումների հաշվառումները: |
| **2** | **Դպրոցում բազմակարծիք ներառական և մասնակցային արժեքային միջավայրի ստեղծում** | |
| | 4 (շատ արդյունավետ) | Սովորողները չեն վախենում նոր բան ասել, նույնիսկ՝ սխալվել, քանի որ դրանք ուղղվում են սիրով:<br>Սովորողները սիրով օգնում են միմյանց և համագործակցում: |
| | 3 (արդյունավետ) | Սովորողները հայտնում են սեփական միտքը, չեն վախենում սխալվելուց, քանի որ դրանք ուղղվում են բարյացակամությամբ:<br>Սովորողները սիրով օգնում են միմյանց: |

| | | |
|---|---|---|
| | 2 (քիչ արդյունավետ) | Սովորողները երբեմն խոսում են ազատ, թեև լարված են լինում՝ աշխատելով չսխալվել:<br>Սովորողները երբեմն օգնում են միմյանց: |
| | 1 (անարդյունավետ) | Սովորողները ազատ ու անկաշկանդ չեն, քանի որ վախենում են սխալվելուց:<br>Սովորողները չեն օգնում միմյանց: |
| **3** | **Դպրոցի աշխատակազմի արժևորման խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորում** | |
| | 4 (շատ արդյունավետ) | Նորարար ուսուցիչ է, որ փնտրում ու գտնում է ուսումնադաստիարակչական գործի իրապես նոր խնդիրներ, մեթոդներ ձևեր, եղանակներ, միջոցներ, հարստացնում գիտության փորձը: Մշտապես իրականացվում է խրախուսման համակարգ: |
| | 3 (արդյունավետ) | Ուսուցիչը տիրապետում է արդեն կատարված մշակում-ներին, «հայտնագործություններ է անում ինքն իր համար»: Գիտության հարստացում չկա: Խրախուսման համակարգը հաճախակի է իրականացվում: |
| | 2 (քիչ արդյունավետ) | Ուսուցիչը թույլ է տիրապետում անհրաժեշտ կարողություններին, երբեմն սխալներ է թույլ տալիս, դժվարանում է իր գործունեությունն իրականացնել: Խրախուսման համակարգը հազվադեպ է իրականացվում: |
| | 1 (անարդյունավետ) | Ուսուցիչը բացարձակապես չի տիրապետում անհրաժեշտ կարողություններին ու ներքուստ էլ «փակ» է մասնագիտական աճի համար, չի ցանկանում տիրապետել մասնագիտական կարողություններին: Անձնակազմի խրախուսում երբեք չի իրականացվում: |

| 4 | **Դպրոցական համայնքի, ծնողական համայնքի, գործընկերների հետ համագործակցության խորացում** | |
|---|---|---|
| | 4 (շատ արդյունավետ) | Դպրոցը գործում է՝ որպես համայնքի անբաժանելի մաս: Առկա է ընտանիքների հետ հաղորդակցությունը և համագործակցությունը: Շահագրգիռ կողմերը ներգրաված են կառավարման գործընթացի մեջ: Մշտապես է կապ հաստատվում տարբեր գործարար կազմակերպությունների, քաղաքական, հոգևոր և սպասարկման ծառայությունների հետ: |
| | 3 (արդյունավետ) | Դպրոցը գործում է՝ որպես համայնքի մաս, սակայն թույլ է ընտանիքների հետ հաղորդակցությունը և համագոր-ծակցությունը: Շահագրգիռ կողմերը սահմանափակ են ներգրավված կառավարման գործընթացի մեջ: Հաճախակի է կապ հաստատվում տարբեր գործարար կազմակերպությունների, քաղաքական, հոգևոր և սպասարկման ծառայությունների հետ: |
| | 2 (քիչ արդյունավետ) | Դպրոցը գործում է որպես համայնքի մաս, սակայն առկա չէ ընտանիքների հետ հաղորդակցությունը և համագործակցությունը: Շահագրգիռ կողմերը հազվադեպ են ներգրավված կառավարման գործընթացի մեջ: Հազվադեպ է կապ հաստատվում տարբեր գործարար կազմակերպությունների, քաղաքական, հոգևոր և սպասարկման ծառայությունների հետ: |
| | 1 (անարդյունավետ) | Դպրոցը չի գործում՝ որպես համայնքի մաս: Առկա չէ ընտանիքների հետ հաղորդակցություն: Շահագրգիռ կող-մերը ներգրավված չեն կառավարական գործընթացի մեջ: Բացակայում է կապը տարբեր գործարար կազմակերպությունների, քաղաքական, հոգևոր և սպասարկման ծառայությունների հետ: |

| | | |
|---|---|---|
| **5** | **Դպրոցում հալածանքի օտարման և բռնության կանխարգելում** | |
| | 4 (շատ արդյունավետ) | Մթնոլորտը ջերմ է: Դասարանում տիրում է առողջ հումոր, ծիծաղը: |
| | 3 (արդյունավետ) | Մթնոլորտը աջակցող և հաճելի է: Ուսուցիչն իսկույն կանխում է սովորողների իրար ծաղրելու կամ վիրավորելու յուրաքանչյուր փորձ: |
| | 2 (քիչ արդյունավետ) | Մթնոլորտը երբեմն խիստ ու կաշկանդող է: Դասարանում երբեմն ուրախ և առողջ հումոր կա, բայց երբեմն էլ իրար ծաղրում են: |
| | 1 (անարդյունավետ) | Մթնոլորտը լարված է, կաշկանդող, խիստ: Հաճախ ուսուցիչը սովորողներին և սովորողներն իրար ծաղրում են, վիրավորում: |
| **6** | **Արտադպրոցական և երկարօրյա ուսուցման կազմակերպում** | |
| | 4 (շատ արդյունավետ) | Առկա է պայմաններ սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների, մշակութային, ճանաչողական գեղագիտական գիտելիքների զագացման, ֆիզիկական զարգացման, ռազմահայրենասիրական դաստիարակությամբ, բնապահպանական գիտելիքների ձեռքբերմանը: Դպրոցում գործում է երկարօրյա ուսուցում: Մշակված է սովորողների և նրանց կարիքների ուսումնասիրության վրա: |
| | 3 (արդյունավետ) | Սովորողների հետաքրքրությունների համար արտադպրոցական միջոցառումների հաճախականությունը քիչ է, երկարօրյա ուսուցման, պայմանները լիարժեք չեն: |

| | | |
|---|---|---|
| | 2 (քիչ արդյունավետ) | Արտադպրոցական աշխատանքները դպրոցում հազվադեպ է կազմակերպվում: Ուսումնական հաստատության կողմից, սովորողների և նրանց կարիքների ուսումնասիրումն չի իրականացվել: |
| | 1 (անարդյունավետ) | Սովորողների համար արտադպրոցական աշխատանք չեն կազմակերպվում, չեն իրականցվում սովորողների կարիքների ուսումնասիրությունը, դպրոցում բացակայում է երկարօրյա ուսուցումը: |
| 7 | **Համագործակցություն կառավարման և խորհրդակցական մարմինների հետ** | |
| | 4 (շատ արդյունավետ) | Տնօրենը և կառավարման, խորհրդակցական մարմինները մշտապես ներգրավված են դպրոցի գործունեության վրա ազդող որոշումներ կայացնելու գործում:<br>Մշտապես առկա է համագործակցությունը տնօրենի և կառավարման մարմնի, խորհրդակցական մարմինների միջև: |
| | 3 (արդյունավետ) | Տնօրենը և կառավարման, խորհրդակցական մարմինները հաճախակի են ներգրավված դպրոցի գործունեության վրա ազդող որոշումներ կայացնելու գործում:<br>Առկա է համագործակցությունը տնօրենի և կառավարման մարմնի, խորհրդակցական մարմինների միջև: |
| | 2 (քիչ արդյունավետ) | Տնօրենը և կառավարման, խորհրդակցական մարմինները հազվադեպ են ներգրավված դպրոցի գործունեության վրա ազդող որոշումներ կայացնելու գործում:<br>Առկա է թույլ համագործակցությունը տնօրենի և կառա-վարման մարմնի, խորհրդակցական մարմինների միջև: |
| | 1 (անարդյունավետ) | Տնօրենը և կառավարման, խորհրդակցական մարմինները բացարձակապես ներգրավված չեն դպրոցի գործու- |

| | | |
|---|---|---|
| | | նեության վրա ազդող որոշումներ կայացնելու գործում: Առկա չէ համագործակցությունը տնօրենի և կառավարման մարմնի, խորհրդակցական մարմինների միջև: |
| **8** | **Տեխնոլոգիաներ և նորարարություններ** | |
| | 4 (շատ արդյունավետ) | Ուսումնական հաստատության էլեկտրոնային և համակարգչային տեխնիկան, սարքավորումները և օժանդակ համակարգերը մշտապես օգտագործվում են: Սովորողներն ու դպրոցի աշխատակազմը տեղեկատվության աղբյուրներ մշտապես են օգտագործում: |
| | 3 (արդյունավետ) | Ուսումնական հաստատության էլեկտրոնային և համակարգչային տեխնիկան, սարքավորումները և օժանդակ համակարգերը հաճախ են օգտագործվում: Սովորողներն ու դպրոցի աշխատակազմը տեղեկատվության աղբյուրներ հաճախ են օգտագործում: |
| | 2 (քիչ արդյունավետ) | Ուսումնական հաստատության էլեկտրոնային և համակարգչային տեխնիկան, սարքավորումները և օժանդակ համակարգերը հազվադեպ են օգտագործվում: Սովորողներն ու դպրոցի աշխատակազմը տեղեկատվության աղբյուրներ հազվադեպ են օգտագործում: |
| | 1 (անարդյունավետ) | Ուսումնական հաստատության էլեկտրոնային և համակարգչային տեխնիկան, սարքավորումները և օժանդակ համակարգերը բացարձակապես չեն օգտագործվում: Սովորողներն ու դպրոցի աշխատակազմը տեղեկատվության աղբյուրներ ընդհանրապես չեն օգտագործում: |

# 5. ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

| Գործառույթի և/կամ ենթահամակարգի նկարագիրը (1) | Ռիսկի նկարագիր (2) | հավանականության գնահատականը (3) | հետևանքով ազդեցության գնահատականը (4) |
|---|---|---|---|
| Տարիֆիկացիոն մատյանների քննարկում և կազմում | Տարիֆիկացիոն մատյաններում ի հայտ եկած թերություններ | 2 | 2 |
| Հաստիքացուցակի քննարկում և կազմում | Հաստիքացուցակի սխալ կազմում և դրույքաչափերի խախտում | 1 | 1 |
| Աշակերտների թվի հաշվառում և ներկայացում | Աշակերտների ընդունման, հեռացման կարգերի խախտումներ, սխալ հաշվառում | 2 | 2 |
| Պետական ուսումնական պլանի քննարկում և համապատասխանեցում | Դպրոցի ուսումնական պլանի կազմելու ժամանակ թույլ տված սխալներ | 1 | 1 |
| Դասաբաշխում և պետական պարտադիր բաղադրիչների բաշխում | Ուսումնական պարտադիր բաղադրիչի ոչ ճիշտ բաշխում | 1 | 1 |
| Դասացուցակի կազմում և հրապարակում | Դասացուցակի ոչ ճիշտ և ոչ ժամանակին կազմում | 1 | 1 |
| Խմբակների ժամերի բաշխում և աշխատանքների իրականացում | Ուսումնական խմբակներին տրամադրված դասաժամերի և աշխատանքների անհամապատասխանեցում | 1 | 1 |
| Մանկավարժական խորհրդի կազմի ընտրում, նիստերի գումարում, արձանագրում | Մանկավարժական խորհրդի կազմի սխալ ընտրում նիստերի ոչ ժամանակին գումարում, արձանագրում | 1 | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| Դպրոցի կառավարման խորհրդի նիստերի կազմակերպում | Դպրոցի կառավարման խորհրդի նիստերի ոչ Ժամանակին կազմակերպում և արձանագրում | 2 | 2 |
| Խորհրդակցական մարմինների ձևավորումը դպրոցում | Խորհրդակցական մարմինների ոչ ճիշտ գործառույթներ | 2 | 2 |
| Ուսուցիչներին ժամանակին ներկայացնել վերապատրաստումների, ատեստավորումների | Գործող օրենքի կարգերի խախտումներ | 1 | 1 |
| Վարչական աշխատողների, ուսուցիչների աշխատանքային, առարկայ ական ծրագրերի մշակում և կազմում, հաստատում | Վարչական աշխատողների, ուսուցիչների աշխատանքային, առարկայական ծրագրերի սխալ մշակում և կազմում | 2 | 2 |
| Մեթոդական մասնախմբերի աշխատանքների կազմակերպում, նախագահների նշանակում | Մեթոդական մասնախմբերի սխալ և թերի աշխատանքներ | 2 | 2 |
| Ուսումնական տարվա սկզբի, ընթացքի, ավարտի արձակուրդների հայտարարում և հաստատում | Օրենքով սահմանված կարգով չեն իրագործվում ուսումնական տարվա սկիզբը, ընթացքը, ավար տր, արձակուրդները | 1 | 1 |
| Դասարանների կոմպլեկտավորում | Դասարանների կոմպլեկտավորման կարգի խախտում | 1 | 1 |
| Աշակերտների անձնական գործերի լրացում, ստուգում, կարգավորում | Թերություններ աշակերտների անձնական գործերում | 2 | 2 |
| Ուսուցիչների անձնական գործերի լրացում, ստուգում, կարգավորում | Թերություններ ուսուցիչների անձնական գործերում | 2 | 2 |
| Ընդունվող աշակերտների պայմանագրերի կնքում, հեռացողների՝ լուծում | Թերություններ աշակերտների պայմանագրերում | 2 | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| Ընդունվող ուսուցիչների պայմանագրերի կնքում, հեռացողների՝ լուծում | Թերություններ ուսուցիչների պայմանագրերում | 2 | 2 |
| Աշակերտների շարժի գրանցամատյանի լրացում | Թերություններ աշակերտների շարժի գրանցամատյանում | 3 | 3 |
| Գործավարական աշխատանքների իրականացում | Թերություններ պայմանագրերի, հրամանների, շարժի մատյաններում | 3 | 3 |
| Հրամանագրքերի լրացում և պահպանում | Թերություններ հրամանագրքերում | 3 | 3 |
| Սովորողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգում և գնահատում | Սխալներ այս գործընթացն իրականացնելիս | 3 | 3 |
| Շրջանավարտների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգում և գնահատում | Սխալներ այս գործընթացն իրականացնելիս | 3 | 3 |
| Քննաշրջանի կազմակերպում, քննությունների անցկացում: | Սխալներ այս գործընթացն իրականացնելիս | 3 | 3 |
| Վկայականների և ատեստատների լրացում և բաշխում | Թերություններ վկայականները և ատեստանները լրացնելիս | 2 | 2 |
| Մատենավարության կազմակերպում, ստուգում և վերահսկում | Թերություններ մատենավարություն իրականացնելիս | 4 | 4 |
| Կիսամյակային ամփոփիչ աշխատանքների կազմակերպում և ստուգում | Թերություններ և անճշտություններ տվյալ աշխատանքում | 3 | 3 |
| Կիսամյակային և տարեկան գնահատականների հաշվառում և նշանակում | Թերություններ և անճշտություններ տվյալ աշխատանքում | 3 | 3 |
| Բացակայությունների հաշվառում և | Թերություններ և անճշտություններ | 4 | 4 |

| | | | |
|---|---|---|---|
| նշանակում | տվյալ աշխատանքում | | |
| Օլիմպիադաների, ուսուցող ական մրցույթների, միջոցառումների կազմակերպում | Թերություններ և անճշտության ուններ, բացթողումներ տվյալ աշխատանքում | 2 | 2 |
| Դասղեկների նշանակում, աշխատանքների կազմակերպում, պլանների ստուգում: | Թերություններ և անճշտություններ, բացթողումներ տվյալ աշխատանքում | 2 | 2 |
| Անհատական և խմբակային դասալսումների կազմակերպում | Թերություններ արձանագրություն ներում | 2 | 2 |
| Ժամանակակից մեթոդների և ներդրման և կիրառման գործառույթ | Մեթոդներին չտիրապետելն ու անտեղյակ լինելը | 3 | 3 |
| Ռազմահայրենասիրական, քրիստոնեական դաստիարակության կազմակերպում | Թերություններ և անճշտություններ, բացթողումներ տվյալ աշխատանքում | 2 | 2 |
| Ուսումնադաստիարակչական աշխատանքների գործառույթ | Թերություններ և անճշտություններ տվյալ աշխատանքում | 2 | 2 |
| Ուսուցիչների հաճախումների հաշվառում | Ուսուցիչների պարտականությունների թերակատարումն, սխալ արձանագրում | 2 | 2 |
| Ուսուցիչներին կարգապահական տույժի ենթարկում, խրախուսում | Թերություններ և անճշտություններ տվյալ աշխատանքում | 2 | 2 |
| Գրադարանի գրքերի հաշվառում, դասագրքերի բաշխում, վճարների գանձում | Թերություններ և անճշտություններ տվյալ աշխատանքում | 3 | 3 |
| Դասասենյակների նախապատրաստում, գույքի տեղադրում | Գույքի անհամապատասխանեցում | 2 | 2 |
| Համացանցի կիրառում, | Համակարգիչների խափանում, | 3 | 3 |

| | | | |
|---|---|---|---|
| համակարգչային սենյակի, համակարգիչների օգտագործում, պահպանում | համացանցի ուշ հասանելիություն | | |
| Բուժկետի առկայություն և առաջին օգնության գործառույթների իրականացում | Բժշկական նյութերի բացակայում | 3 | 3 |

*Ռիսկերի գնահատականը տրվում է 1-4 թվային մեծությամբ (1-ը համապատասխանում է ցածր ռիսկին, իսկ 4-ը՝ բարձր): Միավորի յուրաքանչյուր գործառույթ կամ ենթահամակարգ գնահատվում է երկու տեսանկյունից, ռիսկի առաջացման հավանականության և ռիսկի ազդեցության՝ նկարագրելով այդ գործառույթին կամ ենթահամակարգին յուրահատուկ ռիսկերը: Յուրաքանչյուր ռիսկի համար հավանականությունը և ազդեցությունը գնահատելուց հետո հաշվարկվում է նաև միջին թվաբանական արժեքը:

## 6. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

| № | Ակնկալվող արդյունքները | Պահանջվող անհրաժեշտ միջոցներ Նյութատեխնիկական պարագաներ և մարդկային ռեսուրսներ |
|---|---|---|
| 1 | **Նյութատեխնիկական բազա**<br>Նախակրթական,<br>արդի գրադարան | 01.01.2023թ.-ի դրությամբ տարեսկզբի մնացորդը 6.241.900 ՀՀ դրամ, 2022թ.-ի ֆինանսավորումը պետական բյուջեից կատարվել է 79.106.000 ՀՀ դրամ<br>«Մինի այգու» բերքի իրացում<br>Կրթության շահագրգռվածություն ունեցող կողմեր |
| 2 | **Մանկավարժական համակազմ և չափորոշչային կրթության որակ**<br>Նորարար, փորձառու մանկավարժական համակազմ խրախուսման համակարգի ներդնում<br>Կարողունակ մանկավարժական համակազմ<br>Կոմպետենտ քաղաքացի | Պատվոգրեր<br>Շնորհակալագրեր<br>Կամավոր ատեստավորման, տարակարգի պարտադիր ատեստավորման, վերապատրաստումների նախատեսված գումարներ<br>Փորձի փոխանակման պատրաստ ուսուցիչներ<br>միասնական մշակված թեմատիկ պլաններ, հարցաթերթիկներ, դասալսումների միասնական սահմանված ժամկետներ<br>Մասնագիտական գրականություն<br>Ձեռնարկներ<br>Պաստառներ |

| | | |
|---|---|---|
| 3 | **Համագործակցությունը համայնքի կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ**<br>Փոխարդյունավետ համագործակցություն, որից շահում է թե՛ դպրոցը, թե՛ համայնքը<br>Ձեռնարկատիրական նախաձեռնություններ<br>Շահույթի ստացում<br>Շրջանավարտների ներուժի օգտագործում<br>Նոր ծրագրեր<br>ԾԽ-ի, Ախ-ի գործունեության թափանցիկություն<br>Կառավարման և խորհրդակցական մարմինների թափանցիկ գործունեություն | Կառավարական խորհրդի անդամները նպաստում են դպրոցի զարգացմանը:<br>Ծնողական ժողովներ, համայնքային զարգացման հնարավորություններ:<br>Քննարկումների համար նախատեսված կահավորված դասասենյակ: |
| 4 | **Տեխնոլոգիաներ և նորություններ**<br>Աշխատակազմի ՏՀՏ գիտելիքների խորացում:<br>Առցանց կրթական հարթակների օգտագործում<br>Մեդիագրագետ սովորողներ և մանկավարժական համակազմ | **Համակարգիչներ**<br>«Արմաթ» ինժեներական լաբորատորիա,<br>«Սմարթ» դասասենյակ հագեցած համակարգիչներով ինֆորմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչներ<br>Ինտերնետ կապ<br>Տպիչներ<br>Պրոյեկտոր<br>Թղթեր |

| | | |
|---|---|---|
| 5 | **Ուսումնական միջավայր**<br><br>Այնպիսի միջավայր, ուր փոքրիկ ֆիզիկական կամ հոգեբանական միջադեպերը չեն քողարկվում, այլ կանխվում են:<br><br>Սովորողների համար ներառական մասնակցային միջավայրի ստեղծում:<br><br>Բազմակարծիք, արժեքային միջավայրի ստեղծում:<br><br>Անվտանգ միջավայրի ապահովում բոլոր սովորողների համար (ԿԱՊԿ ունեցող, օտարերկրյա և այլն):<br><br>Միջավայր, որտեղ սովորողները ուսուցիչներին իրենց ձեռքբերումների և հաջողությունների համար ծափահարում են<br><br>Կրթական միջավայր, ուր տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ | Քննարկումներ, զրույցներ կրթական գործընթացի մասնակիցների հետ<br><br>Համագործակցություն ՏՄԱԿ-ի աշխատակիցների հետ<br><br>Համագործակցային թիմ<br><br>(տնօրեն, տնօրենի տեղակալներ, մանկավարժներ)<br><br>Համագործակցող կուռ մանկավարժական կոլեկտիվ: |

# 7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները, որոնք մշակված են յուրաքանչյուր գործողության համար՝ հաստատվում են խորհրդի կողմից:

Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է ուսումնական հաստատության կառավարման խորհրդի կողմից՝ տարեկան առնվազն 2 անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:

Վերահսկողությունը իրականացվում է գնահատման չափորոշիչների հիման վրա:

Հաճախակի անդրադառնալ դպրոցի զարգացման ծրագրին և հաշվի առնելով ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ կատարվող, ինչպես նաև հանրակրթության քաղաքականության ոլորտում իրականացվող փոփոխությունները, իրականացնել արդյունքների գնահատում, կատարել լրամշակում:

Ծրագրում նախատեսված աշխատանքները պետք է հանդիսանան տարեկան աշխատանքային պլանի բաղադրիչ և իրագործվեն նախատեսված ժամանակահատվածներում:

Զարգացման հնգամյա ծրագրից առանձնացնել յուրաքանչյուր տարվա անելիքները, կատարել այն և ներկայացնել կատարման վերաբերյալ հաշվետվություն:

Զարգացման ծրագիրը ենթակա է փոփոխման ըստ անհրաժեշտության:

Զարգացման ծրագրի կատարումը պետք է լինի բաց քննարկումների, լրացումների, շարունակական շտկումների և փոփոխությունների համատեքստում:

***<u>Վերահսկողական կառավարում</u>***

- ***Իրականացնել կազմակերպության առաքելությունը:***
- ***Իրականացնել նպատակները:***

- ***Ուշադրությունը կենտրոնացնել հետևյալին՝ ամեն ինչ ճշգրիտ կատարելուն, արդյունավետ աշխատանքի խրախուսմանը:***
- ***Հետևել աշխատանքների իրականացմանը և մարդկանց տեղեկացնել, թե ինչպես կարելի է հասնել բարձր արդյունավետության:***

| № | Միջոցառում/ գործողություն | Ակնկալվող արդյունք | Սահմանված ժամկետ | Կատարված աշխատանքի նկարագրություն | միջոցառման /գործողության չկատարման կամ մասնակի կատարման/առկայության | փոփոխություններ,լրացումներ , կատարելու մասին | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|
| ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐԱԿ | | | | | | | |
| | Ժամանակակից կրթական պահանջները բավարարող ուսումնական (ֆիզիկական) միջավայրի ապահովում:<br>Հարմարեցված ուսումնական միջավայր: | Ունենալ ժամանակի պահանջներին համապատասխան դպրոց | Հաշվետու ժամանակահատվածում | | | | |
| | Նոր չափորոշիչների ներդրման քայլաշար: | Կարողունակահեն կրթություն<br>Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության ապահովում | Ուստարվա ընթացքում | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ուսուցիչների մասնագիտական որակի կատարելագործում՝ միասնական, առարկայական թեմատիկ պլանների մշակում<br>Գնահատման նոր չափանիշների տեղայնացում: | Մրցունակ, նորարար, մանկավարժական կազմ, չափորոշչային պահանջներին համահունչ գործունեություն | Ուստարվա ընթացքում | | | | | |
| | ՏՀՏ վերապատրաստման դասընթացների խորացում<br>Դպրոցը հագեցնել նորարարական տեխնոլոգիաներով | Ժամանակի պահանջներին համահունչ ՏՀՏ գործիքները կիրառել դասապրոցեսում | Ուստարվա ընթացքում | | | | | |
| | Դասալսումներ, առարկայական միամսյակներ, տնօրինության կողմից գրավոր աշխատանքներ, գրավոր աշխատանքներ բոլոր առարկաներից<br>2-9-րդ դասարանցիների համար | Բարձրացնել կրթության որակը | Ուստարվա ընթացքում | | | | | |
| | Մեծացնել ներգրավվածությունը առարկայական դպրոցական, մարզային, հանրապետական օլիմպիադաներում այլ հեղինակավոր մրցույթներում (մարզային ուսումնամարզական խաղեր) | Մրցունակ, ակտիվ սովորողներ, որոնք կկրեն անհատական և թիմային արժեհամակարգ: Մեծանում են սովորողների առաջընթացը և ուսումնական նվաճումները | 2 ամիսը 1 անգամ յուրաքանչյուր կիսամյակը 2 ամնգամ ուստարվա ընթացքում | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման գործընթացի շարունակական իրականացում և մշտադիտարկում | Չափորոշչային փոփոխություններին քաջատեղյակ և դրա պահանջները պատրաստակամ կատարող ուսուցիչ | Ուստարվա ընթացքում | | | | |
| | Փորձի փոխանակման նպատակով սերտ համագործակցել այլ դպրոցների հետ, ինչպես նաև կրթության շահառու գործընկերների | Կատարելագործում, նորի, առաջավորի փոխանցում | Ուստարվա ընթացքում | | | | |
| | Բազմակարծիք, ներառական, մասնակցային բնույթի միջոցառումներ, լայն համագործակցություն ՏՄԱԿ-ի, ծնողական, աշակերտական խորհուրդների միջև | Դպրոցում միջավայրի հարմարեցման բարենպաստ պայմաններ, ինտեգրված աշխատանք բռնության, այլակարծության, հետևողական բացառում | Ուստարվա ընթացքում | | | | |
| | Դասարանի կառավարման և դասղեկական աշխատանքի մշտադիտարկում | Դասարանի հմուտ բարեվարք, ղեկավար ուսուցիչներ | Ուստարվա ընթացքում | | | | |
| | Երկարօրյա ուսուցման ծառայության իրականացում ըստ չափորոշչի | ԿԱՊԿ ուսման մեջ թերացող սովորողների ուսումնառության ապահովում, վերջնարդյունքներով պայմանավորված կարողունակութ-յունների ապահովում | Ամբողջ ուստարվա ընթացքում | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Մասնակցել համայնքային բոլոր միջոցառումներին (շաբաթօրյակներ, սպորտային խաղեր, հուշարձանների պահպանություն, մշակութային միջոցառումներ) | Դպրոց-համայնք ամուր կապ | Ուստարվա ընթացքում | | | | |
| | Ծնող-դպրոց կապը ապահովել, օրախնդիր քննարկումներ, ծնողական ժողովներ | Բաց համագործակցություն, ծնող-դպրոց փոխադարձ աջակցություն | Օգոստոս-սեպտեմբեր յուրաքանչյուր ամիս | | | | |
| | Ռազմահայրեն-ասիրական և մշակութային տարբեր միջոցառումների կազմակերպում | Մշակութային կարողունակության բարձրացում, ունենալ սեփական դիրքորոշում և կյանքի հմտություն | Ուստարվա ընթացքում | | | | |
| | Բարձրացնել ուսուցիչների մասնագիտական հմտությունները համընդհանուր ներառման շրջանակներում՝ նպաստելով պետական քաղաքականության շարունակական զարգացմանը և կրթության հավասար ապահովմանը | ԿԱՊԿ ունեցող սովորողների կողմերը զարգացնել | Ուստարվա ընթացքում | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շարունակել արդեն ավանդույթ դարձած միջոցառումները, սեմինարները, փառատոնները՝ «Գիրք նվիրելու օր», «Մայրենիի օր», աշնան փառատոն, ցուցահանդեսներ, կավճանկարչություն և այլն: | Մշակութային, ինքնաճանաչողական, սոցիալական, ժողովրդական, քաղաքացիական, տնտեսական և այլ կարողունակութ-յունների զարգացում: | Ուստարվա ընթացքում | | | | | |
| | Քննարկումներ, սեմինարներ, սովորողների, մանկավարժների, էթիկայի կանոնների և բարեվարքության թեմաներով | Համերաշխ, անձնակազմ և սովորողներ | Պարբերաբար | | | | | |
| | Այցելություն մշակութային օջախներ, հուշահամալիրներ, համերգ, թատրոն, կինո, պատմական վայրեր, ԿԳՄՍ միջնորդագրերի (աբոնեմենտների) ակտիվ օգտագործում: | Մշակութային կարողնակության ձևավորում | Ուստարվա ընթացքում | | | | | |
| | Մշտապես կատարելա-գործել տնօրինության կառավարման կարողունակությունները, ծրագրերի մշակման ռեսուրսների ներգրավ-ման. Մշտադիտարկման աշխատանքի արդյու-նավետ պլանավորման արդյունավետության բարձրացման ուղղությամբ | «Հավասարություն կրթական գործընթացներում» նշանաբանով և ժողովրդավար առողջ, բարոյահոգեբանական մթնոլորտ չափորոշ-չային պահանջներին համապատասխան կրթության շարունակականության ապահովում | 3 ամիսը 1 անգամ | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | ԿԱՊԿ ունեցող երեխաների ուսուցումը և դաստիարակությունը կազմակերպել հենվելով դրական կողմերի վրա, բացահայտելով կարողությունների զարգացման բարձր մակարդակը | Հայտնաբերել ԿԱՊԿ ունեցող երեխաների ուժեղ կողմերը և զարգացնել այն | Ողջ ուստարվա ընթացքում | | | | |
| | Ընդլայնել աշխատանքները ներառական ոլորտում | ԿԱՊԿ ունեցող երեխաների համար ստեղծել հարմարություններ | Ուստարվա ընթացքում | | | | |
| | Իրավական ակտերի, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ճիշտ վարում, օրենսդրական նորմերի պահպանում: | Հետևել իրավական ակտերում կատարվող փոփոխություններին:<br>Կազմակերպել իրազեկման սեմինարներ շահառու աշխատակիցների համար | Հաշվետու ժամանակահատվածում | | | | |
| | Դպրոցի զարգացումն ապահովելու նպատակով՝ ֆինանսական կայուն հոսքերի ապահովում: | 1.Ապահովել հուսալի հարաբերություններ բարերարների հետ:<br>2.Դպրոցի կայացած, գործարար շրջանավարտներից ստեղծել շրջանավարտների խորհուրդ, որը կօժանդակի դպրոցի ֆինանսական գործունեությանը: | Պարբերաբար | | | | |
| | Կառավարման, խորհրդակցական մարմինների համագործակցային, կառուցողական հարաբերությունների ձևավորում: | Կոլեգիալ կառավարման մարմնին ներգրավել դպրոցում իրականացվող միջոցառումներին, իրազեկել և | Հաշվետու ժամանակա-հատվածում | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կառավարման խորհրդի, խորհրդակցական մարմինների դպրոցամետ գործունեություն՝ ըստ կարգով վերապահված գործառույթների | ժամանակին կատարել նախատեսված աշխատանքները:<br>Կոլեգիալ կառավարման մարմնի, խորհրդակցական մարմինների հետ հաճախակի հանդիպումների արդյունքում ունենալ իրազեկված, դպրոցի ընթացիկ գործունեության մասին լիարժեք տեղեկացված խորհուրդ և խորհրդակցական մարմիններ:<br>ԾԽ և ԱԽ ակտիվ ներգրավվածություն արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում | | | | | | |
| | Դպրոցի կանխատեսելի բարեփոխումները առաջին հերթին կախված են մանկավարժական համակազմի որակական բարելավումից: Գիտատեխնիկական բարեփոխումներին զուգընթաց ուսուցիչներ ունեն անհրաժեշտություն վերապատրաստումների, ոչ միայն բուն մասնագիտական, այլ նաև տեխնիկական՝ կապված ՏՀՏ-ի գործածության հետ: Անհրաժեշտ է ունենալ վերապատրաստված, | Անհրաժեշտ է ձեռնարկել ուսման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:<br>Հետևողականություն կրթական որակի նկատմամբ, հաճախակի դասալսումներ, նոր մեթոդների կիրառման խրախուսում:<br>Խրախուսել ուսուցիչների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին, ինքնակրթությունը: | Պարբերաբար, ըստ անհրաժեշ-տության | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | նորարական գաղափարներով օժտված ուսուցչական և մանկավարժական համակազմ:<br>Ձեռնարկել ուսման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:: | Վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքների կիրառելիություն դասապրոցեսի ընթացքում<br>Մշակել խրախուսման մեխանիզմներ այն ուսուցիչների համար, որոնք ներկայացնում են որևէ նորարարական, ինքնուրույն մշակված ծրագիր: | | | | | | |
| | Կամավոր ատեստավորում անցած և տարակարգ ունեցող ուսուցիչների փոքր թվաքանակ | Աշխատել կամավոր ատեստավորմանը մասնակցող և տարակարգ ունեցող ուսուցիչների քանակի ավելացման ուղղությամբ՝ խրախուսել, աջակցել;<br>Մեթոդ միավորումների նիստերում քննարկումներ, վերլուծություններ անել, օգնել հաղթահարելու կասկածները և մասնակցելու | Հաշվետու ժամանակա-հատվածում | | | | | |
| | Մեթոդմիավորումների աշխատանքի արդյունավետության բարձրացման միջոցառումները | Փորձի փոխանակման նպատակով ձևավորել միջդպրոցական մեթոդական միավորումներ | Պարբերաբար, ըստ անհրաժեշ-տության | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կնպաստեն ուսուցիչների որակավորման բարձրացմանը և կրթության որակի բարձրացմանը: | Ուսումնասիրել և տարածել առաջավոր փորձը: | | | | | |
| | Դպրոց-ծնող-համայնք կապերի ամրապնդում: Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին Ծնողական խորհրդի աջակցությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքներին | Ծնողներին ներգրավել դպրոցում իրականացվող աշխատանքներում: Բարձրացնել ծնողական խորհրդի դերն ու մասնակցությունը դպրոցին վերաբերող կարևոր հարցերի լուծման գործում: Կարևորագույն որոշումներ կայացնելիս հաշվի առնել ծնողների կարծիքը: Ակտիվացնել և խրախուսել առավել ակտիվ ծնողներին: Սահմանել ժամանակացույց ծնողների կատարած աշխատանքների մասին հաշվետվություն ներկայացնելու համար: Հաճախակի կազմակերպել սոցիոլոգիական հարցումներ ծնողների շրջանում դպրոցի գործունեության վերաբերյալ: ԾԽ-ի կողմից ծնողների հետ տարվող աշխատանքը՝ սովորողների հաճախումների, ուշացումների և վարքագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրա- | Հաշվետու ժամանակահատվածում | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | վելու դպրոցական աշխատանքներում:<br>Ծնողական խորհրդի համագործակցություն համայնքի տարբեր սոցիալական խմբերի հետ:<br>ԾԽ-ի կողմից ծնողնե-րի հետ տարվող աշ-խատանքը՝ սովորող-ների հաճախումների, ուշացումների և վար-քագծային շտկումների ուղղությամբ, պասիվ ծնողներին ինտեգրելու, ներգրավելու դպրոցա-կան աշխատանքներում: | | | | | | |
| | Կայուն համագործակցություն դպրոցի զարգացմանը նպաստող կառույցների և բարերարների հետ | Կայուն ֆինանսական ներդրումներ ունենալու համար անհրաժեշտ է ամրապնդել գործընկերային հարաբերությունները ներդրողների հետ:<br>Պետական հատկացումները ծախսել նպատակային՝ ուղղելով ուսուցիչների մասնագիտական կարողությունների որակական բարելավմանը:<br>Մեծացնել ծնողների ներգրավվածությունը ոչ միայն կատարված աշխատանքները գնա-հատելու, այլ նաև ա-ջակցելու նպատակով:<br>Դպրոցում կատարվող աշխատանքների | Հաշվետու ժամանակահատվածում | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | կառավարման որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ստեղծել գնահատման համա-կարգ, որի անմիջական աջակցողները պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողները, վար-չական աշխատողները, կոլեգիալ կառա-վարման խորհուրդը, խորհրդակցական մարմինները: | | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ունենալ առաջադեմ գաղափարներով կրթված և դաստիարակված ազգային արժեքների խորը գիտակցմամբ օժտված աշակերտական համակազմ, որը պատրաստ է գիտության զարգացմանը զուգընթաց տիրապետել նորագույն տեխնոլոգիաների ընձեռնված հնարավորություններին: | Կազմակերպել զանազան մշակութային միջոցառումներ: Համագործակցել երիտասարդական կազմակերպություն-ների, ՀԿ-ների հետ: Մշտադիտարկումները և առարկայի դասավանդման դրվածքի ուսումնա-սիրությունները Քաղաքացիական դաստիարակություն, արժեհամակարգի, կարողունակություն-ների ձևավորում, մասնագիտական կողմնորոշման ապահովում | Հաշվետու ժամանակահատվածում | | | | | |
| | Դպրոցում ձևավորել սովորեցնելու և սովորելու մշակույթը: | Սեմինար-պարապմունքների միջոցով լրացնել թույլ կողմերը: Դաստիարակչական աշխատանքների բարելավում, արդյունավետ մեթոդների կիրառում: | Պարբերաբար | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Դպրոցում Հանրակրթության պետական չափորոշչի ներդրման հետ կապված աշխատանքների իրականացում | Իրականացնել սահուն անցում կարողունակությունների վրա հիմնված կրթության իրականացմանը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջների ապահովմանը ըստ կրթական աստիճանների:<br>Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում:<br>Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում:<br>Տնօրենի, փոխտնօրենների և ուսուցիչների վերապատրաստումների իրականացում:<br>Մանկավարժական համակազմի համալրում հմուտ և փորձառու կադրերով<br>Մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում: | Պարբերաբար | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ուշադրության կենտրոնում պահել սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակություն ապահովող միջոցառումները | Կյանքի կոչել ռազմա-հայրենասիրական դաստիարակության «Նոր ռազմավա-րությունը դպրոցում» ծրագիրը՝ այն է<br>Մասնագիտական կողմնորոշման միջոցառումներում ընդգրկել «Հանդիպում սպայի հետ» թեմայով միջոցառումներ<br>Այց Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարան:<br>Այց Մոնթե Մելքոնյան վարժարան:<br>Կազմակերպել միջո-ցառումներ «ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ» նվիրված տոներին:<br>Հաճախակի կազմակերպել հայրենասիրական թեմայով շարադրությունների, մրցույթներ:<br>Դպրոցում ստեղծել այնպիսի միջավայր, որ թե՛ դասերին, թե՛ միջանցքում աշակերտները մշտապես աչքի առաջ ունենան ազգայինն ու հայրենասիրականը: | Պարբերաբար, ըստ անհրաժեշ-տության | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ունենալ արդյունավետ ուսուցում իրականացնող ուսումնական հաստատություն՝ միտված առաջընթացի, հաջողությունների, | Իրականացնել հաջողությունների ամենամյա ամփոփում, որտեղ ներկայացվում է հաստատության ուսումնադաս-տիարակչական աշխատանքների հաշվետվություն, ակտիվ ուսուցիչները, ծնողները և աշակերտ-ներն էլ արժանանում են տնօրենի խրախու-սանքին (պատվոգիր, շնորհակալագիր): | Պարբերաբար, ըստ անհրաժեշ-տության | | | | | |
| | Տեխնոլոգիաների նպատակային օգտագործում, բազայի հարստացմանը միտված միջոցառումներ: | Նորագույն տեխնոլո-գիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրո-ցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունա-կական բարելավում և արդիականացում Մեդիագրագիտության կարևորում ու զար-գացում Մենթորական համակարգի ներդնում<br>Օժանդակել ՏՀՏ ոլորտի ուսուցիչների մասնագիտական գիտելիքների, հմտությունների ձեռքբերմանը:<br>Հաճախակի դարձնել ՏՀՏ օգտագործմամբ ցուցադրական, օրինակելի դասերը, որոնցում կարտացոլվի կատարված աշխատանքները: | Պարբերաբար, ըստ անհրաժեշ-տության | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Առկա է մոտիվացիայի պակաս: Ոչ բոլոր աշակերտներն են հետաքրքրված նորարարական ծրագրերով: | Համագործակցային դասերի միջոցով ստանալ առավելագույն արդյունք:<br>Բարեգործների ներդրումների օգնությամբ սահմանել սովորողներ համար կրթաթոշակ: | Հաշվետու ժամանակահատվածում | | | | |
| | Իրականացված աշխատանքների թափանցիկության և հրապարակայնության ապահովում: | Կայք էջի լիարժեք և անխափան գործարկում:<br>Հետևողականորեն ներկայացնել դպրոցի գործառույթներին վերաբերող փաստաթղթերը դպրոցի կայքէջում:<br>Դպրոցի առաջընթացի, ձեռքբերումների, հիշատակի, հիշարժան օրերի լուսաբանում դպրոցի ֆեյսբուքյան էջում: | Հաշվետու ժամանակահատվածում | | | | |
| | Ներառական կրթության կազմակերպման համար պատշաճ պայմանների բարելավում: | Վերանորոգել և համապատասխան ուսումնական պարագաներով վերազինել ներառական կրթության համար նախատեսված սենյակը: | Ուստարվա ընթացքում | | | | |
| | Ներառական կրթությամբ սովորող աշակերտների ծնողների հետ որոշակի աշխատանքներ տանելու անհրաժեշտություն: | Հաճախակի հանդիպումներ ծնողների հետ, խնդիրների լուսաբանում: | Պարբերաբար, ըստ անհրաժեշ-տության | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Առկա է ուսումնառության բարձր արդյունքները խրախուսող ծրագրերի, մեթոդների պակաս: | Ուսումնական գործըն-թացում ներառել հետա-քրքիր ծրագրեր, մեթոդներ, որոնք բարձրացնում են ուսուցման որակը:<br>Սեմինար-պարապ-մունքների միջոցով լրացնել թույլ կողմերը:<br>Կազմակերպել աշակեր-տական կոնֆերանսներ, մրցույթներ, վիկտորի-նաներ, ֆորումներ, ինտելեկտուալ խաղեր՝ սովորելու նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով: | Պարբերաբար, ըստ անհրաժեշ-տության | | | | |
| | *Դպրոցում ձևավորել հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք համապատասխանում են երեխաների իրավունքներին և ժողովրդավարական դպրոցի գաղափարին:*<br>*Բարձր հիմքերի վրա պետք է պահել աշակերտ-համայնք-դպրոց կապը: Դպրոցը համայնքի համար ոչ միայն կրթական, այլև մշակութային օջախ է:* | Ինքնավարությունը պետք է արտահայտվի Տնօրենություն աշակերտների ինքնադրսևորման կարծիքի ազատ արտահայտմամբ:<br>Ամրապնդել աշակերտ – ուսուցիչ, աշակերտ – ծնող, աշակերտ – համայնք հարաբերությունները:<br>Ինքնավարությունը պետք է արտահայտի և ապահովի աշակերտ-ների իրավունքների պաշտպանությունը:<br>Աշակերտական ինքնավարության միջոցով ապահովել աշակերտների կրթությունը և ինքնակրթությունը, նպաստել նրանց համակողմանի զարգացմանը: | Հաշվետու ժամանակահատվածում | | | | |

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Վանաձորի Դանիել Վարուժանի անվան թիվ 16 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը սովորողներին հնարավորություն կտա հասնելու չափորոշչով սահմանված մակարդակին: Սա նշանակում է, որ կրթական համակարգի յուրաքանչյուր բաղադրիչ նոր գիտելիքներ և հմտություններ կզարգացնի: Ուսուցիչները կտիրապետեն նոր մոտեցումների, այդ թվում նաև հրահանգավորման, դասավանդման նոր ռազմավարությունների, ինչը պետք է շարունակական բնույթ կրի: Այս ամենի նպատակը մեկն է՝ ավելի շատ գիտելիքներ տալ սովորողներին, զարգացնել նրանց կարողությունները, հմտությունները, դիրքորոշումների և արժեքների ձևավորման աստիճանը:

***«Վանաձորի Դանիել Վարուժանի անվան թիվ 16 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը կդառնա այնպիսի հասփապրություն, որ հանդես կգա նոր առաջարկներով և քննադատաբար կմոտենա սեփական աշխատանքին:***





***Արդյունավետ դպրոց***

1. Արդյունավետ է այն դպրոցը, որն ապահովում է կապ, շփում, հաղորդակցություն, փոխազդեցություն և համագործակցություն ուսումնական գործընթացի բոլոր շերտերում: Հանդես է գալիս որպես ուսուցիչ-սովորող-ծնող հիմնական կապող օղակ՝ հասարակական պահանջները բավարարելու և հասարակության զարգացումը ապահովելու համար:
2. Արդյունավետ դպրոցը պետք է լինի երեխաների սոցիալական աճի լաբորատորիա:
3. Արդյունավետ դպրոցը կարելի է ստեղծել, եթե տվյալ հասարակությունը, որի համար կոչված է դպրոցը արձանագրում է մշակութային առաջադիմություն:
4. Արդյունավետ է կոչվում այն դպրոցը, որը սովորեցնում է այնքան լավ, որ անհատը գիտելիքները կիրառի իր և հասարակության բարօրության համար:
5. Արդյունավետ է կոչվում այն դպրոցը, որտեղ գիտելիքը յուրացվում է այն չափով, ինչքանով անհատը հայտնագործել և կառուցել է այն իր մտապատկերում:
6. Կատարյալ արդյունավետ է կոչվում այն դպրոցը, որը ցուցաբերում է խնամք ողջ հանրակրթության ընթացքում և ոչ մի սովորող ուշադրությունից դուրս չի մնում: